

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻՔ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՆԱԽՈՐԴ ՊԱՏՐԻԱՐՔ ՕՐՄԱՆԵԱՆ Ս. Ի ԴԷՄ ԵՂԱԾ  
ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԵԱՆՑ

ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԾԱՏՈՒՅՈՒԱԾ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

1909—1910 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ Ի. ՆԻՍՏԻՆ Ի 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1910



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Ս. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ ԵՎ ՈՐԴԻՔ

1910

342բ

Տ-30

01 MAR 2010

05 FEB 2010

342 F  
8-30

Ամենապատիւ

Սրբազան Պատրիարք Հայր ,

Նախագահ Ազգային Ընդհանուր Ժողովի

Ազգային Ընդհանուր Երեւոյթանաւորան  
Ժողովի կողմէն Յանձնաժողովի քննութեան  
ենթարկուած էին նախորդ Պատրիարք Օրման-  
եան Ս .ի դէմ եղած ամբաստանութիւնները :

Այն դրութեան հետ Պատրիարքի Ժողու-  
վիլ կը ներկայացնենք մեր տեղեկագիրը , որ  
մի առ մի յիշատակուած են ամբաստանու-  
թիւնները , անոնց բնոյթը , և կատարուած  
քննութեանց արդիւնքը , Յանձնաժողովի կող-  
մէն յանդիմանելու հանդերձ , իւրաքանչիւր  
ամբաստանութեան մասին :

Անշուշտ չպիտի յաւատկենք իր անթերի  
ու կատարեալ աշխատութիւն մը ներկայաց-  
նել այդ տեղեկագիրը , մանաւանդ երբ ի նկա-  
տի ունենանք քննութեան օտարկայ կողմ խորն-  
գիւրներուն բարդութիւնը և անոնցմէ անոնց  
բազմակողմանի վախճակ հանդամները , ինչ-  
պէս նաեւ լուսարձանութեանց ընթացքին մէջ  
անխուսափելի հանդիսացող խոչընդոտները .  
չնայելու ժամանակի , անցքերու , գործող դէմ-  
քերու և վիճակներու հետաւորութեան , քաղա-  
քական որոշ պայմաններու , եւ այլն : Սակայն  
ընդ դմին ջանադիր կըլտն ենք օգտուիլ այն  
բոլոր աղբիւրներէն , որոնք կրնային ունենալ  
կերպով լոյս տալ քննելի խնդիրներուն վրայ  
և նպաստել ճշմարտութիւնը երևան բերելու :

Եւ : Յամենայն դէպս՝ ինչ որ խղճի և բա-  
նականութեան պահանջն էր մեր այս պատաս-  
խատուող աշխատութեան մէջ և ինչ որ Տաճ-  
կահայ նորագոյն պատմութեան անձանցիկ է-  
ջերուն կը վերաբերէր , հոգ տարած ենք , որ  
մանաւոր հարածութեամբ , անաչառութեամբ  
և մեկին ի յայտ գան , նախորդ Պատրիարքին  
երկոտտանամանայ պաշտօնավարութեան բն-  
թացքին հետ կապուած ամբաստանութիւնները  
խղճամբողջ պատասխանով մը որոշուին և վեր-  
ջապէս Տաճկահայ իրականութեան մէջ տա-  
րածախտութեանց ու մտքերու չփոխաթափեանց  
տեղի առնուլ կարգ մը անարդարութիւններ յըս-  
տակօրէն պարզուին Պատիւ Ժողովի և անոր  
միջոցաւ ալ ամբողջ հասարակութեան :

Կատարուած աշխատութեանց մասին ինչ  
ինչ անհրաժեշտ լուսարձանութիւններ տալու և  
Յանձնաժողովի հաւաքական գաղափարներն  
արտայայտելու համար՝ տեղեկագրեր նշանակած  
ենք մեր պաշտօնակիցներէն Հմայեակ Էֆ .  
Արամեանց :

Քննիչ Յանձնաժողովի կազմութեան և  
նախնական գործառնութեանց մասին տեղե-  
կագրին սկիզբը համառօտակի կերպով խօս-  
ուած բլլալով , զանց կընենք հոս նշանակել և  
կը մտաչենք ի համարը Ս . Աջոյդ ,

Որդիական խորին պատկառանքով

Ի Դիմաց Գախորդ Պատրիարքի Քննիչ Յանձնաժողովի

Ասեմապիւր Ասեմապիւր Նախագահ  
Հ. ԱՐԱՄԵԱՆԷ Ա. ՄԱՆՈՒԷԼԱՆ ՄԱՂ. ԵՊՍ. ՏԷՐՈՒՆԵԱՆ

1910 Հոկտեմբեր 1/14  
Կ . Պոլիս



## Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՆԱԽՈՐԴ ՊԱՏՐԻԱՐԷ ՕՐՄԱՆԵԱՆ Ս.Ի ԴԷՄ ԵՂԱԾ  
ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԵԱՆՑ

## ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## Ա.

## ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Կ. Պորոյ նախորդ Պատրիարք Տ. Մաղա-  
րիա Ս. Արքեպիսկոպոս Օրմանեանի զէմ և-  
զած կարգ մը ամբաստանութիւնները քննելու  
համար Ազգային Բնօրէնութիւնը Երեւոյթանական  
Պատկ. Ժողովը՝ 1908 Դեկտեմբեր 12 և 19ի  
ԺԱ. — ԺԲրդ նիստերուն մէջ՝ Քննիչ Յանձնա-  
ժողով մը ընտրեց Ազգային Սահմանադրութեան  
5 և 6րդ յօդուածներուն տրամադրութեանց  
համաձայն, հետեւեալ կազմով. —

|                                   |  |
|-----------------------------------|--|
| Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկ. Վեհապետեան |  |
| » Գնել Ծ. Վրդ. Դալէմբերեան        |  |
| » Դէորդ » » Ապանեան               |  |
| » Արիստակէս Քահ. Հիսարեան         |  |
| » Տաճատ » Փաշայեան                |  |
| Վառձապուհ Էֆէնտի Մանուկեան        |  |
| Հմայեակ » Արամեանց                |  |
| Նշան » Ժիւսեան                    |  |
| Սարգիս » Էսմէրեան                 |  |
| Պարզեւ » Փափաղեան                 |  |

Յանձնաժողովս իր անդրանիկ նիստը դու-  
մարելով Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ, 1908  
Դեկտեմբեր 26ին, զիւանք կազմեց ընտրելով՝

|                                   |            |
|-----------------------------------|------------|
| Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկ. Վեհապետեան |            |
| Նախագահ                           |            |
| Վառձապուհ Էֆ. Մանուկեան           | Ատենապետ   |
| Հմայեակ » Արամեանց                | Ատենադպիր: |

Ապա 1909 Յունուար 2 և 16ի նիստե-  
րուն մէջ Յանձնաժողովս ձեռնարկելով իր բուն  
աշխատութեանց, որոշեց՝

Ա. — Զրադիլ միայն Ազգային Ժողովէն  
յղուած ամբաստանադրերով, քանի որ Յանձ-  
նաժողովը կը լրջի Ազգ. Ժողովէն և վերջ-

նոյն պաշտօնադրերն են միայն որ պիտի կրը-  
նան Խորհրդարանական Յանձնաժողովի քնն-  
նութեանց նիւթ կազմել, համաձայն Ազգ.  
Սահմանադրութեան 5 և 6րդ յօդուածներու  
տրամադրութեանց:

Բ. — Բայ աստի, լսել նաեւ քննելի խըն-  
դիրներուն ու անձերուն հետ առնչութիւն  
ունեցող վկայութիւններ:

Գ. — Բոլոր ամբաստանողները հրաւիրել  
անձամբ, յատենի Ժողովին, լուսարանելու ի-  
րենց ամբաստանութիւնները, ապով փաստեր  
և ցուցմունքներ անոնց մասին:

Դ. — Քննիչ Յանձնաժողովիս զատական  
հանդամանքն աչքի առջեւ ունենալով՝ առ  
նուազն եօթն (7) անդամներու ներկայու-  
թեամբ միայն նիստ ընել:

Ե. — Յանձնաժողովիս նիստերը բացարձա-  
կապէս դռնիակ ընել:

Այս սկզբունքներուն հետ Յանձնաժողովը  
որոշեց առնել նաեւ ամբաստանեալ Սրբազա-  
նին մանրամասն բացատրութիւններն ու եղած  
ամբաստանութեանց մասին իր պատասխան-  
ները, թէ՛ գրաւոր և թէ՛ բերանապի՝ անձամբ  
լսելով զինքը, որպէս զի կարելի եղածին չափ  
քննութիւններն ըլլային բազմակողմանի, լու-  
սարանուած և մեկին:

Յանձնաժողովիս անդամներուն յաճախա-  
կի բացակայութեանց և հրաժարումներուն  
հետեւանօք, բազմիցս հարկադրուած ենք եղեր  
ամիսներով բնօրէնութիւնները մեր աշխատութիւնները  
և ապակի կազմներուն լրանալուն և գէթ օ-  
րինական մեծամասնութիւն կազմուելուն, ինչ  
որ յայտնի կերպով Յանձնաժողովիս ատե-  
նադրութեանց առմարէն:

Այսպէս, Պարզեւ Էֆ. Փափաղեան, Երու-  
սաղէմի հալիւններու Քննիչ Յանձնաժողովին  
անդամակցելուն պատճառով՝ սկիզբէն և եթ

Հ' կրցաւ մամուսկցի մեր աշխատութիւններուն : Նոյնպէս և Տ. Արիստակէս քահ. Հիսար-  
լեան հրաժարած բլլալով, 1909 Փետրուար  
20ին միայն կարելի եղաւ հրաժարականն ետ  
առնել տալ :

1909 Մայիս Տի նիստէն սկսեալ հրաժա-  
րեցան Տ. Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկ. Վեհա-  
պետեան և Գէորգ Ծ. Վրդ. Աստուծոյն, եր-  
կուքն ալ պատուիրակի պաշտօնով Կիլիկիա  
մեկնելուն պատճառով :

Այսպիսով Յանձնաժողովի անդամներուն  
թիւը եօթնի իջաւ : Ըստ այսմ, Յունիս 5ին  
գլխաւ և զաւ. Պատկ. Աղդ. Ժողովից որպէսզի  
մեր կազմը լրացնէ նոր անդամներու ընտրու-  
թեամբ : Մինչ այդ, Յունիսի սկիզբը Տ. Գնել  
Ծ. Վրդ. Գալէմբեարեան ալ Կիլիկիան պատ-  
ուիրակի պաշտօնով Ատանա մեկնեցաւ : Ինչ-  
պէսզի մեր անդամներ միայն, ինչ որ անհար-  
կը դարձնէր աշխատութեանց շարունակու-  
թիւնը, մանաւանդ որ եպիսկոպոսի մը նա-  
խագահութիւնը կը պակսէր :

Պատկ. Ժողովի ամիսներով իր Օրակար-  
գին վրայ պահելով մեր կազմին ամբողջական  
ինչոյրը, հաշիւ Սեպտեմբեր 25ի 1. նիստին  
մէջ կատարեց պակսող չորս անդամներուն  
ընտրութիւնը՝ յանձին Տ. Տ. Հմայեակ Դի-  
մաքսեան և Մաղաքիա Տէրունեան Արքեպի-  
սկոսն, Կիլիկիայէն վերադարձող Գնել Ծ.  
Վրդ. Գալէմբեարեանի և Սարգիս Սուլին Է-  
ֆէնտի :

Հոկտեմբեր 23ին Յանձնաժողովս վերակը-  
սելով իր նիստերը՝ ձեռնարկեց աշխատու-  
թեան : Սակայն Դիմաքսեան Տ. Հմայեակ Արք-  
եպիսկոսի սկզբանէ անտի հրաժարած բլլալով  
և ոչ մէկ նիստի ներկայ է եղած : Սուլին Էֆ.  
ալ իր պատուիրակի Ատանա մեկնելու հար-  
կազրուած՝ վերջնականապէս հրաժարեցաւ :  
Ուստի հարկ եղաւ նոր ընտրութիւնով մը  
կազմերիս լրացնել : Հրաժարեալներու տեղ  
ամբողջականութեան կաշուեցան Տ. Վահան քահ.  
Սոյեան և Մարկոս Էֆ. Նաթանեան :

Ինքնին հասկանալի է թէ Յանձնաժողու-  
վիս անդամներուն աշխատութիւնի վիճակը  
զօրաւոր պատճառ մը եղած է մեր զբաղում-  
ներուն երկարաձգման և գործին յապաղման :

Ահա այդ էր պատճառը, որ չուրջ երկու  
տարուան ընթացքին մէջ Յանձնաժողովս հա-  
զիւ երեսուն նիստ կրցած է գումարել և զբա-  
ղած է այն բոլոր ամբաստանութիւններով,

որոնք Պատկ. Ժողովից միջոցաւ ներկայաց-  
ուած էին մեզ ի քննութիւն :

Ինչպէս սոյն տեղեկագիրին լուսնադար-  
թեան կերեւի, Յանձնաժողովս զանց է բրած  
այն գրութիւնները և ցուցմունքները, որոնք  
նախորդ Պատրիարք Օրմանեան Ս. Ի. և անոր  
հետ պաշտօնավարող Վարչութեանց համարա-  
տուութեան կը վերաբերէին, ուստի և սա-  
րատանութեան նիւթ կազմել չէին կարող :

## Բ.

### ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ահա Պատկ. ամիսով յանկը այն ամբաստա-  
նութիւններուն, որոնք Պատկ. Ժողովից մա-  
տուցուած և անկէ ալ բոլոր օրինի Յանձնա-  
ժողովի քննութեան յանձնուած էին. —

Ա. — Օրմանեան Ս. Իբր հակասահմա-  
նադրական՝

1. — Ուխտադրութիւնը.
2. — Մի և նոյն Ժողովով բոլոր գործերը  
վարելը.
3. — Առանց Վարչութեան հաւանութեան  
Տեսուչ Խորհուրդներ անուանելը.
4. — Տեսուչ Խորհուրդներու գործերուն  
միջամիտ լիլը.
5. — Առժամայ Թաղական Խորհուրդներ  
կազմելը և Տեղապահներ նշանակելը.
6. — Կանոնաւոր Աղդային Ժողովի փա-  
խարէն զաղտագողի Ժողով գումարելը.
7. — Միանգամայն համարատուի և հա-  
մարատուի դիրք ստանալը.
8. — Թաղերները միմեկ տարադրելը.
9. — Այցաբարդով քահանայ ձեռնադրելը.
10. — Կարապետ քահ. Թէլալեանի կար-  
գալուծութիւնը կարգադրութեան վերածելը :

Բ. — Անդօսիկ Իօաննէֆիլի կսակի  
խնդիրը.

Գ. — Հաւուական խնդիրներ.

Դ. — Համարատուութեան վերաբերեալ  
խնդիրներ.

Ե. — Հակահարձիք ժողովականները  
սասելը.

Զ. — Ոսիկանական միջոցներու կի-  
րաբիւմը կամ սպառնալիք՝ հրաժարի ու-  
զող ժողովականներու վերաբերմամբ.

Է. — Ժամանակին չ'հաժարիլը.

Ը. — Լահէյ Բաւուած հեռագիրը.

Թ. — Սասունի շարդին տեղեկագիրնե-  
րուն անյայտ սցումը :

Ժ. — Աղբամասի ումբակոման առթիւ  
լուրը.

ժԱ. — Միջադիւղի և Պեթիքաւի գե-  
րեզմանատուներուն խնդիրը.

ժԲ. — Արմենակ Գաւակեօգեալի սպա-  
նութեան խնդիրը.

ժԳ. — Կարապետ Տեւոնեանի և կնոջ  
ամուսնալուծման խնդիրը :

Այս ամբաստանութիւնները լուսնադար-  
թու և ճշմարտութիւնն ի յայտ բերելու համար  
հարկ անհրաժեշտ եղաւ պրոպոզի Օրմանեան  
Ս. Ի. երկատուանամիայ պաշտօնավարութեան  
ընթացքին մէջ կազմուած Ժողովներուն տառ-  
նադրութիւնները. Աղդային Պատրիարքարանի  
պաշտօնական տօմարները, վաւերագրերը, ինչ  
որ ամբաստանութեանց հետ առնչութիւն ու-  
նէր, — լսել ամբաստանողներն ու անոնց  
ցոյց տուած վկանները, — մանրագնդին քնն-  
նութեան ենթարկել մասնաշնչուած իրողու-  
թիւնները, — ի նկատի առնել թեր և դէմ  
ցուցմունքներն ու փաստերը և բոլոր այն հա-  
նել Յանձնաժողովիս կարգադրութիւնները,  
զորո նկարագրուած պիտի գտնէ Պատկ. Ժո-  
ղովի յետագայ լսովններուն մէջ :

## Գ.

### ՀԱԿԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Այս մասին ամբաստանողներն են հետեւ-  
եալ Աղդային երեսփոխանները՝

1. — Արիստակէս Էֆ. Գառաբորեան, որուն  
կը ձայնակցին Միքայ Մսերեան, Արթուր  
Սարաֆեան, Հայկազուն Պէկեան, Տէօֆիլ  
Տաթեան և Դադարոս Զպաքեան Էֆէնտի-  
ները : — Ամբաստանագիր, 1908 Հոկտեմբեր  
31 թուակիր :

2. — Դադարոս Զպաքեան Էֆէնտի, առան-  
ձին ամբաստանագրով, 1908 Նոյեմբեր 14  
թուակիր :

3. — Տ. Տ. Գրիգորիա Պալաքեան և Դեւոնդ  
Դուրեան վարդապետներ և Միքայէլ քահ.  
Աշնեան, — երեքն ալ անդամներ նախորդ

Կրօնական Ժողովի : — Ամբաստանագիր 1908  
Դեկտեմբեր 12 թուակիր :

4. — Տ. Հմայեակ քահ. Էքսէրճեան : —  
Ամբաստանագիր 1908 Դեկտ. 11 թուակիր :

5. — Յովհաննէս Էֆ. Հինդեան : — Ամ-  
բաստանագիր, 1908 Նոյեմբեր 12 թուակիր :  
Գրութիւններ՝

- Տ. Վահրամ Ս. Մանկունի, 1909 Յունիս.  
15 թուակիր :

- Միքայէլ Էֆ. Շիրինեանի, 1909 Յունիս. 30  
և Մարտ 10 թուակիր :

\*\*\*

Վերջիշեղաններէն Տէօֆիլ Տաթեան Էֆ.  
1909 Փետրուար 10 թուակիր գրութեամբ մը  
կը հրաժարէր նախկին Պատրիարքն ամբա-  
սանելէ :

Տ. Մանկունի Ս. 1909 Փետրուար 20ին  
գրած իր մէկ տոմարով կը յայտնէր Յանձնա-  
ժողովիս թէ՝ « Ես ամբաստանագիր տուած  
չեմ, այլ օրինական մի լացատրութիւն կամ  
լուծումն ուղած » :

Իսկ Տ. Դեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան 1909  
Փետրուար 26 թուակիր գրութեամբ մը, ի պա-  
տասխան իրեն ուղղուած հրաւիրագրին՝ գալու  
և իր ցուցմունքներն ու փաստերը տալու հա-  
մար, — կը յայտնէր թէ « Ես եւ ըսելիք կամ  
ամբաստանութիւն չունիմ տառել քան ինչ որ  
արդէն գրաւորապէս ներկայացուցած եմ » :

Տ. Միքայէլ քահ. Աշնեան բնաւ չ'պա-  
տասխանեց մեր նայնիմաստ հրաւիրագրին :

\*\*\*

Հակասահմանադրականութեան վերաբե-  
րեալ սոյն ամբաստանութեան հիմունք կը կազ-  
մեն հետեւեալները, որ քաղուած են վերջիշ-  
եալ ամբաստանագրերէն ու ամբաստանողնե-  
րու բերանացի ցուցմունքներէն. —

ա. Սահմանադրութեան անթերի գործադ-  
րութեան հսկելու ուխտ բրած բլլալուն հա-  
կառակ, կէտ առ կէտ չ'հետեւելով այդ պար-  
տականութեան՝ իր երդումը դրժած է :

բ. Առանց ժողովներու որոշման ինքնա-  
զուլի գործած է :

գ. Չարաչար գործածելով Սահմանադրու-  
թեան 11րդ յօդուածով իրեն վերադասուած  
իրաւունքը՝ բոլոր կամ անօրինութիւնները  
բրած է :

դ. 10—12 տարի միևնույն վարչութեամբ գործած է:

ե. Պակասող ժողովականաց տեղ նորերը ընտրած է:

զ. Յաճախակի 4—5 հոգեով ժողովներ կազմած է:

հ. Տեսուչ խորհուրդներուն իրաւունքները Քաղաքական ժողովին տուած է:

ը. Վանօրէից խորհուրդը և Երևմտից ու Կապիաց Հոգաբարձութիւնները խափանած է ու վերակազմած է:

թ. Կ. Պոլսոյ թաղերը տարիներով կառավարած է առժամայն Թաղական խորհուրդներով և գաւառները՝ Տեղապահներով:

ժ. Ազգային ժողովի բացման ամբիւ պետական արգելքին դէմ յանուն ազգին պայքարած է:

ժա. 25 երեսփոխաններու ներկայութեամբ զաղտագողի և ապօրինի Ազգ. ժողով կազմած և Վարչութիւն ընտրած է, մեծաւ մասամբ նախորդները վերընտրելով:

ժբ. Միևնույն անձերը Քաղաքական ժողովի և Տեսուչ խորհուրդներու անդամակցութեան կոչելով՝ համարադրութիւն և համարատուութիւն անոնց վրայ կեդրոնացուցած է:

ժգ. Բնականօրէն լուծած է այն մարմինները, որոնք կուրօքէն իրեն հետեւած էին:

ժդ. Ժողովներուն այն որոշումները, որ իրեն անհաճոյ են թուած, դորձադրած է:

ժե. Սահմանադրութեան հակառակ «Մնամակալութիւններ» կազմած է:

ժզ. Ուխտի ժամանակ երգուած է ոչ թէ Սահմանադրութեան, այլ «վերաքննեալ կամ վերաքննելի» Սահմանադրութեան վրայ:

ժէ. Ինքը միայն ստորագրած է թաղերիները, առանց որոշող ժողովներու ատենաներէն վաւերացնելու գանձեր:

ժը. Տանն Կիլիկիոյ արքիւ Ս. Կաթողիկոսին ընտրութիւնը փոխանակ ըստ օրինի Ազգ. Ընդհանուր ժողովի վաւերացման ենթարկելու, Օրմանեան Ս. ինքն իր Վարչութեան հետ վաւերացուցած է:

ժթ. Իօանէսքիւի, Սրբանտիտի և այսօրինակ խնդիրները կարգադրած է լոկ Վարչութեան հետ:

ի. Այցեւորմանով քահանայ կը ձեռնադրէր: Հակառակ՝ ընծայացուի համար կարգուած

Գննիչ Սահմանադրի անդամաց տեղեկագրին՝ քահանայ ձեռնադրել կուտար:

իա. Կեսարիոյ Տ. Կարապետ քահ. Թէլլալեանի մասին ժողովը կարգադրեց թեմայի վճիռ կուտայ, բայց Օրմանեան Ս. արձանագրութիւնը եղծելով իր ձեռքով կ'աւրէ «կարգադրեց» ըստը և կը դրէ «կարգադրել»:

իբ. Առանց Կրօնական ժողովի որոշման ամուսնալուծման հրահանգ մը հանած է:

\*\*\*

Օրմանեան Ս. իր 12 Մարտ 1909 թուակիր ընտրածով պատասխանադրին մէջ, ուղղած Յանձնաժողովի, այս ամբաստանութեանց ամօթիւ կը գրէ.

«Սահմանադրութեան գործադրութիւնը խափանեալ էր 1891է ի վեր: Սահմանադրութեան փոփոխութիւնը պատուիրուած էր 1896 Հոկտեմբեր 12 և 19 և 25 թուակիր պետական հրամանագրերով: Սահմանադրութեան փոփոխութիւնը ընդունուած և որոշուած էր 1896 Նոյեմբեր 6ի Ընդհանուր ժողովով և գործադրութիւնը լիազօր և բացարձակ ձեռնահաստութեամբ յանձնուած և թողուած էր նորընտիր Վարչութեան: Առանցքէ կարծ տեղի ունեցան իմ ընտրութիւնը և երգումը: Սահմանադրութեան անթերի գործադրութեան պարտաւորութիւնը այդ որոշմանց հետ համընթաց պիտի ըլլար, մինչ իմ տեսութեամբ, այդ կերպով ուրիշ կենտական պարտաւորութիւն ծնունդ առած էր, այն է Սահմանադրութեան պաշտպանութիւնը և անթերի պահպանումը: Այս եղած էր այլևս Սահմանադրական պարտաւորութեան մեծ նպատակը և երկտառանման պաշտպանութեան մէջ այս նպատակին ծառայելը, Վարչական ժողովներու հետ համերաշխութեամբ և Յուլիս 16ին կրցայ համարձակ յայտարարել թէ «հակառակ զանազան դժուարութեանց, ուրախ եմ այսօր Ազգային Սահմանադրութիւնը ամբողջաբար յանձնել սիրեցեալ Ազգիս»: Մեր այդ ձգտանք չորհրդէն է որ Ազգը կրցաւ բռնական ճնշմանց վերջուած վայրկեանին անթերի պահպանուած Սահմանադրութիւնը ունենալ իր ձեռքը և զայն գործադրել ու վաշիւր: Իսկ մենք, նախորդ Պատրիարք և նախորդ Վարչութիւն, մեր օրով կարող էինք միայն Սահմանադրութեան գործադրութիւնը մղել մինչև ուր որ արտաքին և պետական և բռնական արգելքներ մեզ

չէին կաշկեղար, և այդմ հաւատարիմ և ճշդ-դատան գանուեցանք:

2. (Ամբաստանողն) կրտէ. — Թէ 6 յօդուածով Պատրիարքին տրուած ժողովական որոշումները կանխելով խնդիր մը լուծելու արտոնութիւնը անհաշկի ի գործ դրած է: — Բայց չ'ըսեք թէ երբ և ո՞ր առիթին մէջ: Եթէ ըլլար, ժամանակին Վարչական ժողովներ զիտողութիւն բրած կրկնային և ատենադրութեանց մէջ անցած կրկար:

3. Կրտէ. — Թէ 11 յօդուածով ժողովներու և խորհուրդներու անդամաց փոփոխութեան մասին Պատրիարքին տուած իրաւունքը չափազանց գործածած է: — Սակայն Վարչական ժողովներէ անդամ վարուած ըլլալու օրինակը չկայ, իսկ Տեսուչ խորհուրդներ միշտ Վարչական ժողովներով ընտրուեցան և փոփոխուեցան, և այդ մասին ընտ. բացատրի իրաւունք չ'գործածեցի այ:

4. Կրտէ. — Թէ հակառակ 26 և 38 յօդուածներուն 10—12 տարի միևնույն վարչութեան գործակցութեամբ պաշտօնավարեց: — Գոհ եմ լսելով որ կընդունուի թէ Վարչութեան գործակցութեամբ պաշտօնավարած եմ: Իսկ Վարչութեան ժողովներուն չ'փոփոխուելը Սահմանադրութեան փոփոխութեան որոշմանէն և պետական արգելքէն ծագած հետեւանք էր, և այն ալ Վարչական ժողովներու որոշմամբ, իրր նուազ վնասակար կողմ պաշտօնապէս քննուեցաւ, նախադատուեցաւ և ընդունուեցաւ:

5. Կրտէ. — Թէ հակառակ 27 և 44 յօդուածներուն՝ Վարչական ժողովաց անդամներուն թիւը չէ լրացած: — Այս ալ ժողովաց վերընտրութեան խափանման հետ նոյն խնդիրն է:

6. Կրտէ. — Թէ հակառակ 30, 86, 87 և 88 յօդուածներուն՝ 4—5 հոգեով Վարչական ժողովներ գումարուած են: — Կրօնական ժողովներ ընդհանրապէս աւելի անդամակցեցնելով գումարուած են, իսկ ժողովներ երբեք ատենի նուազ թիւով եղած չեն, Քաղաքականին հանդիպած է նուազ անդամով գումարուել: Սակայն ժողովականաց թիւը իրապէս նուազած ատեն, օրէն չէր զուրէն անդամներ աւելցնել, իսկ ընտրութեանց խափանումները վերեւ բացատրուեցան: Ժողովականաց թիւին խնդիրը գլխաւորապէս ժողովին պատկանող կէտ էր, բայց ժողովը զի-

տէր, որ հարկը օրէնքն ալ կը լուծէ, ինչպէս կըսէ առաժը: Միւս կողմէն մեծամասնութեան խնդիրը միշտ խափանութեան սկզբամբ նրկատուեցաւ, ինչպէս որ նախապէս ընդունուած կանոնն ու սովորութիւնն ալ նկատած էին:

7. Կրտէ. — Թէ հակառակ 42 և 43 յօդուածներուն, ժողովներու և խորհուրդներու իրաւասութիւնները յարգուած չեն: — Ընդհակառակն խաբարանչիւր ժողովի ձեռնհասութիւնը ճշդիւ յարգուած է և միշտ իրենք իրենց ձեռնհասութիւնը պահած են: Տեսուչ խորհուրդներէն միայն Տնտեսական խնդիր մը ունեցած է, երբ ուզած է իւր հսկողի ձեռնհասութեան խառնել մատակարարութեան գործը, զոր Քաղաքական ժողովը չէ ընդունած, մանաւանդ ազգային գումարին մը այս կերպով, անանկութեան մը ամօթին վտանգուելը տեսնելով: Միւս կողմէն, Սահմանադրական պաշտօնավարութեան խանդարում թեւադրուած կրկար, իթէ յօդուածներուն այնպիսի մեկնութիւն մը տրուէր, որով օժանդակ խորհուրդներ վարիչ մարմնաց լրաց գերակշիռ դիրք կատանան: Գոյով Ընդհանուր ժողովներու գումարման անհարութեան առջև՝ իսկ ժողովին կողմէ խնդիրները իւրացնելու կէտին, այն ձեւը նախընթաց Վարչութիւններու օրով ալ գործադրուած և ընդհանրապէս ընդունուած էր, իրեն անհրաժեշտ հարկ մը՝ սովորական պարագաները հարթելու և ազգային շահերը չ'վտանգելու համար:

8. — Երևմտից Հոգաբարձութիւնը արգէն կանուխէն և ժողովական որոշմամբ ջրնջուած էր, զոր մեր Վարչութիւնն ուղեց վերահաստատել և ընտրութիւններ ալ բրաւ, և միայն գործնական անհարութեան առջև, առժամայն կարգադրութեան ստիպուեցաւ: — Իսկ Վանօրէից խորհուրդ և Կապիաց Հոգաբարձութիւն նախորդ Պատրիարքներու օրէն արգէն գաղարած էին և չէին ընտրուած: Այսու հանդերձ, անոնց գործերը անտես չեղան, և առաջինները Կրօնական ժողովին և երկրորդները Տնտեսական խորհուրդին յանձնուեցան, իրեն յարակից գործեր:

9. Կրտէ. — Թէ հակառակ 55 և 97 յօդուածներուն՝ Պոլսոյ թաղեր երկար ատեն առժամայն Թաղականներով մատակարարուած են: — Սակայն քուէարկութիւնները երբեք չ'զաղրեցան և չ'խափանուեցան: Միայն երբ

համախմբութեանց դէմ արգելքներ և այլ և-  
րեան վախճանած վտանգներ գործարար, նոյն  
խախտողներ քաղաքականութեան խախտողներ  
փախաքանդան և վարչութիւնն օգտակարաբար  
սեպեց ամբաստան թաղականութիւններ ան-  
ուանել, ինչ որ օրէնքին համաձայն է և գոր-  
ծածական եղած է:

10. Կրտէ. — Թէ ըստ 61 յօդուածոյ  
Ընդհանուր Ժողովոյ տարեկան (երկամեայ պի-  
տի ընդ) նախաշնորհները արտօնութեան չեն  
կարող: — Բայց արտօնութիւն ուղղու-  
մանը չէ եղած երբեք, այլ բացարձակ պի-  
տական արգելքը գործածած և Սահմանադրու-  
թեան փոփոխութեան պայմանը միշտ առջև  
դրուած է: — Որոնց առջև վարչութիւնն  
յանձն չէ առած յիշեալ պայմանին զիջանիլ և  
նախադրոյն մնալին է հետևած, և այս կեր-  
պով Սահմանադրութեան դոյտութիւնը վերած:

11. Կրտէ. — Թէ 1906ին վարչական Ժո-  
ղովներուն վերանորոգումը ապօրինի է եղած:  
— Գործի մը մէջ ինչ ինչ երկրորդական պայ-  
մաններու բռնադատեալ դանդաղութիւնը, և  
գործի մը ապօրինի ըստ իր նոյնանշան չեն և  
իրարու տեղ չեն փոխանակուիր: Երբ զիջաւոր  
նախադրոյն յաջողութեան համար, մասնաւոր  
պարագաներ ստիպողականութեան ներքեւ  
զանց կը լինին, այդ ձևը վարչական շրջա-  
նակներու մէջ իր խոստովան կարգադրութեան  
արդիւնք ընդունուած է: Իրօք ալ 1906ի  
վարչութեան վերանորոգումը այն ատեն ըստ  
ընտրողներէ և ընտրեալներէ և անհատական  
հանրութենէ իրեն յաջողութիւն ընդունու-  
ցաւ: — Ատեններ անցնելէ և պարագաներ  
փոխուելէ ետքը, ոմանց այլայլեալ տեսութիւնը  
գործին խեղութիւնը չ'փոխուիր:

12. Կրտէ. — Թէ վարչական Ժողովնե-  
րու անդամներ միանգամայն ճեռու խորհուրդ-  
ներու անդամ եղած են: — Այսպիսի բան մը  
երբեք տեղի ունեցած չէ: Միւս յիշեալ կէ-  
տերէն, Անդրօնի Իսանէպիւրի կառակին խն-  
դիրը, վարչութիւնը յատուկ յանձնաժողովի  
ձևօք ուսումնասիրած և ոչնչանալու իւր ո-  
րոշումը տուած և գործադրութիւնը նախա-  
դաշին յանձնած է: Բերայի շինութեանց գործն  
ալ նոյնպէս ձևանաւ մասնագէտներու քննու-  
թեանց և տեղեկութեանց վրայ, վարչութեան  
Ժողովով որոշուած և գործադրութիւնը Բե-  
րայի Կալուածոց Յանձնաժողովին յանձնած է:  
— Ամուսնալուծմանց հրահանգ մը երբեք կազ-

մուած չէ, այլ ամուսնական դատերուն Կրօ-  
նական Ժողովոյ մէջ նայուելուն կերպին վը-  
րայ, ներքին և սոսմամեայ հրահանգ մը կազ-  
մուած է և Ժողովին մէջ տեսնուած և գոր-  
ծադրութեան դրուած է:

13. Կրտէ. — Թէ նախորդ Պատրիարքը  
հակառակ օրինաց նպատակի հաշիւը իր ձեռքը  
ամփոխած է: — Նպատակի հաշիւներուն Պատ-  
րիարքի ձեռքով նայուած լինելը՝ իրաւութիւն  
է. բայց ինքնին իւրացուցած և ամփոխած չէ,  
այլ վարչութիւնն այդպէս որոշած է և Նպատ-  
ակի Յանձնաժողովները անոր գործակից տուած  
է, և ըստ այնմ ալ գործադրուած է: Այս  
ձևը անհրաժեշտ եղած է՝ կասկածանաց և  
հալածանաց բնութեան ներքեւ նպատակի  
գործը պաշտպանել և արդիւնաւորել կարենա-  
լու համար: Իսկ նպատակի երկաստանաւոր  
հաշիւները բաղդատական ցուցակներով և ըն-  
դարձակ տեղեկագրով ժամանակին ներկայաց-  
ուած են և հրատարակուած ալ են:

1. Կրտէ (Չպարքեան Ղ. Է. Գ.) . — Թէ  
ամբողջ իր Պատրիարքութեան տեսողութեան  
մէջ արհամարհած է սահմանադրական ամէն  
սկզբունք. Խորհուրդներ և Խնամակալութիւն-  
ներ և Թաղականութիւններ լուծած է, Ժո-  
ղովոց որոշումները չէ գործադրած, ստանց  
Ժողովոց որոշումներ գործադրած է, Կրօնական  
Ժողովի մէջ ալ անգամ մը բռնած է. « Դուք  
կ'որոշէք, ես ուզեմ նէ կը գործադրեմ »:  
Սակայն ստանք բոլոր Ժողովական մը չէր, որ  
եղածներէն տեղեկութիւն տնկնար: Հետե-  
ւաբար կամ մասցածին գրոյցներ է գրած, և  
կամ սխալ տեղեկատուութեամբ խաբուած: Այդ  
կարգէն է եւս, իր թէ Կրօնական Ժողովոյ  
մէջ բռնած խօսքին յերկրաւոր: Սահմա-  
նադրութեան պաշտպանութեան և պահա-  
նութեան մէջ յաջողութիւնը, և տասուերկու  
տարիներ վարչական ժողովներու հետ խնդիր  
չունենալով պաշտօնավարելը բուսական են  
յառաջ բերուած զրոյցներուն անհիմն լինելը  
հաստատուել:

2. Կրտէ (Հմայեակ քան. Էքսէրճեան) .  
— Թէ վարչութիւնը պատասխանատու չէ,  
Պատրիարքին կողմէ ուղղակի եղած կարգադ-  
րութեանց: — Ուղղակի տեսութիւն մը, եթէ  
Պատրիարքին կողմէ եղած ուղղակի կարգադ-  
րութիւնք, որեւէ Ժողովական որոշման վրայ  
հիմնուած չեն: Որովհետեւ Ժողովներ սկզբ-  
բունքներ կ'որոշեն և ուղղութիւններ կը գը-

ծեն, և դժուարութիւններ կը լուծեն: Իսկ  
Պատրիարքներ անոնց համեմատ մանրամաս-  
նութիւններ կը գործադրեն:

3. Կրտէ (Տ. Տ. Պալաքեան և Դուրեան  
վարդապետներ և Միքայէլ քան. Սէֆեան) . —  
Թէ Պատրիարքը միանձնաւ, ինքնապաշտ և  
սանձարձակ կը գործէր: — Սակայն ամէն  
երեքշաբթի կոնստանտնուպէս գումարուած  
Կրօն. Ժողովները, Կրօն. Ժողովոյ առջև հան-  
ուած խնդիրներուն օրակարգը, և Կրօն. Ժո-  
ղովոյ որոշումներուն ատենագրութիւնները,  
անոր հակառակ կը ցուցնեն, և կը հաւան-  
տեն թէ խնդիրները Ժողովով կը քննուէին և  
կ'որոշուէին: Սաոր վրայ աւելցուի, որ երբեք  
Ժողովոց մէջ աշակերտի դատողութիւն չէ եղած,  
ինչ որ հարկաւ եղած կըլլար, քանի որ եպիս-  
կոսոս և վարդապետ և քահանայ անդամներ  
նախադաշին հանդէպ ստրկաբար ծառայող չը-  
լայնին կը յայտնեն և կը վկայեն:

4. Կրտէ (Յայեան, Թէ օրակարգի խնդիր-  
ները միշտ իմ ուղած կերպով վարած եմ,  
զիրենք թողով հանդիսատեսի զիրքին մէջ: —  
Սակէ առ առաւելն այն կրնայ հետեւիլ, թէ  
իմ տուած տեղեկութիւններս և բացատրու-  
թիւններս Ժողովականաց գոհացուցիչ երեւ-  
ցած են, և որոշումները զիւրացուցած են:  
Սակայն զիտեւր է, որ Կրօն. Ժողովներ Պատ-  
րիարքարանի մէջ գումարուելուն, և երեք-  
շաբթի օրեր գաւառական թղթակցութեանց  
համեմատ օրը լինելուն պատճառով, գումար-  
մանց մի մեծ մասին ներկայ չէին ըլլար, և  
Ժողովականք իրենց որոշումները անարգել  
կրնային տալ և կուտային. միւս կողմէ, յա-  
տուէ հրաւիրակ զրկելով և ներկայութիւնս  
անհրաժեշտ սեպելով՝ գումարմանց ներկայ լի-  
նել կըստիպէին:

5. Կրտէ (Տ. Հմայեակ քան. Էքսէր-  
ճեան) նոյնպէս միջանկեալ կերպով, թէ եր-  
կիցս Ժողովներէ բացակայած է, իմ ապօրէն  
և քահանայ ընթացից համար: — Սակայն  
եթէ միտք բերէ, կը յիշէ հարկաւ, թէ 1902ի  
խնդիրը Գաղաքական Ժողովին հետ էր, Ժող-  
ովոց շաբաթականութեան վրայ, իսկ 1904 Յունի-  
սին միջադէպը, որուն համար Ժողովին մեկնե-  
ցաւ, բոլոր Կրօն. Ժողովականաց և զիջաւոր-  
ապէս Ատենապետ Մըքաթանին հետ էր, որք  
կրնէ ձախակից չուզեցին ըլլալ: Եւ այդ եր-  
կար բացակայութենէ ետքը նորէն Ժողովի  
յաճախելը, ինծի հանդիպած արեւածին առթիւ

չէր, ինչպէս կը գրէ, վասն զի արեւածը կա-  
նուխէն 1903 Յունաւորին տեղի ունեցած էր:

Ինչ որ ամենցմէ դուրս նախատեսման լու-  
սանքներ, զրպարտական խորհրդածութիւն-  
ներ, և ճրի կղրակացութիւններ են, կը սի-  
րեմ լուծութեամբ անցնիլ, կրից յուզումներուն  
և անխորհուրդ ձգտումներուն վերագրելով  
այլապիսի տարօրինակ գրոհածներ:

Իսկ ընդհանուր կերպով նկատողութեան  
արժանի կը սեպեմ զիսկ տալ, որ այդ գրո-  
թեանց հեղինակներ, կերեւի թէ անցեալ ըն-  
տելութեանց և հալածանաց օրերը չեն տեսած,  
կամ թէ անոնց ծանրութիւնը բնաւ չեն գիտ-  
ցած, կամ թէ կոպտութեան փոփոխութեան հետ  
յիշողութիւններն ալ փոփոխած են, որ ընա-  
լով չեն մտաբերեր ամէն եղելութիւն և գոր-  
ծողութիւն իւր համայնութեայ և յարակից պայմա-  
նացից համեմատութեան և բաղդատութեան  
մէջ նկատել, կշիւ և դատել, որով այլ ընդ  
այլոց և անյարիր կղրակացութեան մէջ ինա-  
լու կը պարտաւորուին:

Չկրցայ նաեւ ճշդել, թէ ինչ մտապատկեր  
կազմած են Պատրիարքական պաշտօնավարու-  
թեան վրայ, քանի որ մէկ կողմէն ժամանա-  
կին վրայ իշխելու և պետութեան և երկրին  
կոպտութեան վրայ ազդելու չափ անձնական  
նախաձեռնութիւն և գործունէութիւն իր  
հակասահմանադրական և մեղադրելի ցոյց տալ  
կը ճգնին: Հարկաւ այդ հակասական յայտա-  
րարութեանց մէջէն ելնելու կերպ մը մտածած  
ունին, որուն իմ միտս չ'կրցաւ թափանցել:  
Հետեւաբար աւելի խորքը պարզելու պէտք  
չեմ զգար:

\*\*\*

Իսկ գալով բերանացի յայտարարութեանց,  
զորս յատենի Յանձնաժողովի ըրաւ Օրման-  
եան Ս. անձամբ պատասխանելով մեր հրա-  
ւերին, 1909 Դեկտեմբեր 12ին, անա՛ ինչ որ  
կը վերաբերի հակասահմանադրականութեան  
վերաբերեալ ամբաստանութեանց և ինչ որ  
բառ առ բառ կը քաղենք մեր ատենագրու-  
թիւնէն, որ հարապատութեամբ ամփոփուած է.

« Ազգային Սահմանադրութիւնը գործադ-  
րուած է ամէն տեղ: — Ամէն վիճակ իր Գա-  
ւառական Ժողովն ունեցած է, և եթէ անոնցմէ  
ոմանց նորոգումները չեն կատարուած, այդ  
կէտը ուղղակի կը պատկանէ իրենց Առաջ-  
նորդարանին: — Իսկ եթէ գաւառական Կրօն.  
Ժողովները չեն նորոգուած, նկատի առնու-

պէտք է որ շատ տեղեր կրօն. ժողովներու անդամները նոյն քահանաներն են եղած, և ըստ այնմ՝ չարունակելի են մնացեր այդ ժողովները:

Պէտքերն և պարագային համեմատ թաղերու մէջ երբեմն առժամայ կազմութիւններ եղած են թաղ. խորհրդոց, բայց նաեւ ընտրութիւններ ալ եղած են: — Իսկ Կոստանի Հոգաբարձութիւնն և Վանօրէից խորհուրդ ըստւոյ մարմիններն արդէն ինչ Պատրիարքներու և Տեղապահներու օրով գոյութիւն չունէին: Իմ օրովս չէ որ դադարած են այդ մարմինները կամ ես՝ դադարեցուցեր եմ դանոնք: — Ելեւմտից Հոգաբարձութիւնն ալ արդէն դադարած էր գոյութիւն ունենալէ: — Թէպէտ Վարչութեան հետ քանիցս փորձեր ըրինք ելեւմտից Հոգաբարձութիւնը կազմելու, բայց յարատեւութիւն չունեցան այդ կազմութիւնները:

Տեսուչ խորհուրդներու վերաբերեալ գործերն ինքնագլուխ կատարել ըսելով՝ Միհրան էֆ. Շիրինեանի ըսածները կակնարկէք: Տեսուչական խորհրդոյ մէջ Շիրինեան էֆ. փոխատենապետ էր, իսկ բուն Ատենապետը Գէորգ էֆ. Աղանեանն էր: Ուղեցին թէ՛ հսկողի և թէ՛ մասնակաւորողի գործը ձեռք առնել, մինչդեռ Տեսուչականը հսկող է և ոչ մասնակաւոր. այս մասին Վարչութիւնը համաձայն չեղաւ իրենց, և ալ համաձայն չէի, և անգամ մըն ալ ես անձամբ Տեսուչականի նիստին դացի՝ օրէնքին և Վարչութեան ըմբռնումը պարզելու համար: Յետոյ խորհուրդի անդամներէն Տանձիկեանի ծանօթ խնդիրն ելաւ, Շիրինեան և Տանձիկեան կարծեցին թէ իմ ձեռքէս պիտի կրնան փախցնել զրամբ. աշխատեցայ, քանձեցի զրամբ և սղաակեցի Տանձիկեանի ձեռքէն: Այս մասին զրիս մէջ ալ ակնարկած եմ, կրնաք կարգալ: — Տեսուչական խորհուրդին զէմ գործած չենք ժողովով: — Երեք անգամ ալ ելեւմտից Հոգաբարձութիւն կազմուեցաւ ժողովի կողմէ, չ'քայեց, ժամանակ մը իմ վրայ մնաց և ես ի մօտոյ կատարեցի ելեւմտից գործը: Քաղաքական ժողովոյ արձանագրութեանց մէջ նայեցէք, եթէ ես ինքնաբերաբար ըրած ըլլայի, ժողովը լուռ պիտի չ'մընար անշուշտ. նայեցէք ատենագրութիւնը:

Ամենեւին համարատուի և համարառուի գերերը չեմ չփոխած, իմ հաշիւներս ալ Տրեսուսական խորհուրդին զրկած եմ որ նային, քննեն, զոր օրինակ Պատրիարքարանի նորո-

գութեան հաշիւները, որ ինչպէս գիտէք, լոկ իմ անձնական զիմուհներուս արդիւնքով ըրած ձեռնարկս էր: — Զանազան խնամակալութիւններ ալ կան, որոնց ընտրութիւնը ժողովով եղած են: Սահմանադրութեան մէջ թաղական խորհուրդ կայ, խնամակալութիւն չ'կայ, ժողովով ընտրուած այս խնամակալութեան մարմինները իմ Պատրիարքութեանէս առաջ ալ կային, իմ օրովս չ'սկսան, և ասոնք միշտ կապուած մնացեր են Վարչութեան, ասոնց գործերը միշտ Վարչութիւնը նայեր է՝ ինչպէս ինչին մէջ՝ նոյնպէս մեր օրով: — Վարչութիւնը Սրբախախտի գործը յատուկ մարմինի մը յանձնեց, ասոր բացառիկ եղանակին համար: — Եթէ ես երգուեալ եմ, ժողովակալներն ալ երգուեալ են պաշտօնին յանձնառութեամբ, և բուն պատասխանատուութիւնը աւելի Վարչութեան կը մնայ որ համարատու է: — Իմ գիտածս, տիրապետութիւնը բաժանուածով կըլլայ, եթէ երբեք ես գործերը և անձերը միացնելու կողմը եղած ըլլամ, կարծեմ աւելի ես զիս բռնադատութեան տակ ձգած կըլլամ այդ պարագային, քան թէ տիրապետելու ձգտած: — Օրինական պայմանաւորութիւնները փոխել կուզէինք մենք, բայց մեզի կը պատասխանէին թէ՛ քանի որ Սահմանադրութիւնը չէք վերաճեցնում, ժողովներն ալ չեն կրնար փոխուի: Եւ մենք ստիպեալ նուազագոյն չարիք համարեցինք ըսելին տակը մնալ քան թէ Սահմանադրութիւնը վերաքննենք ըսելով՝ վրայ տալ: — Նոր ընտրութիւններ կատարելու բացարձակ արգելք կար. ժողովի մէջ մնալու փափաք չ'կար, բայց Սահմանադրութիւնը նոյնութեամբ պահելու հաշիւ կար:

\*\*\*

Յանձնաժողովս երկու կողմի այս բացատրութիւններն առնելէ և պէտք տեսնուած պրոպագանդները կատարելէ յետոյ, անցաւ ամբաստանութեանց կէտ առ կէտ քննութեան:

Եւ նկատեց որ՝

Ա. — Մեղմնագնացութեան կամ Ուխտագրութեան ամբաստանութիւնը ո՛րք է նիւթ:

Քննելով 1896ի Ազգ. Ընդհանուր ժողովի նիստերուն ատենագրութիւնները՝ Յանձնաժողովս տեսաւ որ նոյն տարուան Նոյեմբեր 6ի Բ. նիստին մէջ Ազգ. ժողովը զբաղած է Ազգ. Սահմանադրութեան վերաքննութեան

խնդրով և 42 ձայնով ընդգէմ 5ի ընդունած է Ստեփան փաշա Աղանեանի հետեւեալ բանաձեւը՝

«Ազգային ժողովը նկատի առնելով Ազգային Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը, վիճարանութեամբ որոշեց զայն յանձնել նորընտիր Ազգ. Վարչութեան՝ պարտ ու պատշաճ անօրինութիւնն ընկելու և ի գլուխ հանելու համար զայն համաձայն չափուց Ազգային և Տէրութեան, ամէն պարագայի մէջ անփոփոխ պահելով Սահմանադրութեան հիմնական սկզբունքը»:

Ատկէ 14 օր վերջ, Նոյեմբեր 20ին, Ազգ. ժողովի Գ. նիստին մէջ նորընտիր Պատրիարք Տ. Մաղաքիա Օրմանեան Ս., Մայր եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան Ազգ. ժողովի հրապարակաւ կը կատարէ իր Սահմանադրական Ուխտը, լիովին համաձայն Ազգ. Սահմանադրութեան տրամադրութեան: Եւ ապա, ժողովականներուն ուղղած իր ձառնի սկիզբը կըսէ՝ «Ուխտագիր պարտաւորութեանս առարկայ եղող Սահմանադրութիւնն այն է, զոր կայսերական բարձր հրովարտակով ստացած եմք ժամանակին, սակայն իր մէջ նախատեսուած վերաքննութիւնն որոշուած լինելով՝ երբ կայսերական վաւերացմամբ վերաքննեալն յաջորդէ, այն պիտի լինի այնուհետեւ իմ ուխտագիր պարտաւորութեանս ալ առարկան» և ապա: (Տես ատենագրութիւնը նոյն նիստերուն): Այս ձառը կողջունուի Ազգ. ժողովի կողմէն ծախանարութիւններով:

Ահա ինչ որ գտաւ Յանձնաժողովս Ազգային տարեգրութեանց մէջ այս խնդրի մասին: Ազգային Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը ծագում կ'առնէ՝ արդարութեան գործոց նախարարին 1896 Հոկտեմբեր 19 թուակիր հրամանագրէն, ուղղուած Պատրիարքական Տեղապահ Բարթողիմէոս Ս.ին, ուր ըստւոյ է՝

«... Կը հրամայուի որ նախորդ Պատրիարքին հրաժարած տառն գործէ ձեռքնութեամբ Բաղաքական ժողովոյ անդամոց յարմարագոյններէն բաղկացած նուազ թուով մարմնոյ մը կողմէ Զեր Սրբազնութիւնն և կամ ուրիշ արժանաւոր մը Պատրիարք ընտրուելէն անմիջապէս վերջը՝ Պատրիարքարանի կանոնադրութեան պէտք եղած բարեփոխումներն եւս որոշուին և ներկայացնուին վաւերացման...»:

Եւ նոյն թուի Հոկտեմբեր 25 թուակիր հրամանագրէն, ուր կըսուի՝

«... ժողովին յարմարագոյն գտած անձը դարձեալ Ընդհանուր ժողովոյ ընտրութեան ենթարկուելէ և ըստ օրինի որոշուելէ յետոյ՝ անմիջապէս Ազգային Ներքին Կանոնադրութեան վերաքննութիւնն եւս որոշուի և առաջարկուի»:

Իրողութիւնն այս ըլլալով, Յանձնաժողովս աճիւնիմ նկատեց Տ. Գրիգորիս վրդ. Պաւլաքեանի այն ամբաստանութիւնը եւս, թէ «Օրմանեան Ս. Սահմանադրական ուխտը խեղաթիւրած է»:

Բ. — Թագրիքները միմեկ ստորագրելու պարագան ստույգ է և սակայն չ'կրնար ամբաստանութեան նիւթ կազմել, քանի որ ընկալեալ սովորութիւն դարձած է այդ ընդհանրապէս, ինչպէս որ արդի Ս. Պատրիարք Հայրն ալ մինակ կատարողքէ իւր մատուցած թաղրիքները, ասոնց որոշող ժողովներու ատենին ստորագրութիւններով վաւերացնելու:

Գ. — Այցեւորմով բահանայացնելու ամբաստանութիւնը, որ ըստ Տ. Գր. վրդ. Պաւլաքեանի, իբր թէ այս կամ այն աղբիւրի անձէն ստացած այցաբարտի մը հիման վրայ նախկին Պատրիարքը կարծեմ եղեր խնդրոյ առարկայ անարժան անձը քահանայ ձեռնադրել: Յանձնաժողովս չ'կրնալով Պաւլաքեան Հայրաւորէն ստուգել ակնարկուած քահանային անձը և սակայն՝ իր ձեռնադրութեան տրամադրութեան վրայ ժամանակին զրոյցներու տեղի տուող քահանայի մասին ժողովականաց զիտակցութեան գիմուելով, յայտնուեցաւ որ Գուգիւնձուքի Տ. Յակոբ (Օգսէն) քահանայ Մնակեանին կը վերաբերի:

Դիմեց նախկին Կրօնական ժողովներու ատենագրութիւններուն, ուրկէ պարզուեցաւ հետեւեալը՝

— 1907 Նոյեմբեր 13ին տեղի կունենայ կրօն. ժողովի 10Բ. նիստը, նախագահութեամբ Օրմանեան Ս. և ի ներկայութեան 2 Արքեպիսկոպոս, 2 վարդապետ և 4 քահանայ ժողովականներու:

Ժողովի 14 օրակարգերէն 11րդն է «Տեղեկագիր Տ. Միքայէլ քահ. Աշկեանի», «որով կը յայտարարէ թէ Գուգիւնձուքի քահանայացու տիրացու Օգսէն Մնակեան յարկ ի վարժութիւն իրեն յանձնուած ընծայացունելուն, ամէնէն յաջողակն է, կարողացածը կը հասկը-

նայ, ընթերցումը և առողջանութիւնը չափաւ, գիտէ չորս գործողութիւնները, ունի հմտութիւն թէ՛ ի կրօնական և թէ՛ ի ծխական և չգիտցածներն ուսանելու համար հետաքրքրութիւն ունենալով գրեթէ մէկ ամսուն մէջ բաւական աշխատութեամբ զայնս ուսու բոս բաւականին ։

Այս աստիճանագրութիւնը կը շարունակէ՝ «Ժողովս Տ. Միքայէլ Հօր այս լրացուցիչ տեղեկագրին վրայ որոշեց արժանի Գուգիւնձաքի քահանայացուին ձեռնադրութիւնը և յատենան հրաւիրելով՝ Ամեն. Ս. Նախագահը Պահպանելով մը օրհնեց զայն ։

Այսպիսով այն ամբողջութեամբ կը հերքուի ։

Դ. — Տեսուչ հորհուրդներու, Հոգաբարձութեանց, Թաղական հորհուրդներու եւ Գաւառական Ազգ. Վարչական մարմիններու մասին եւ ընդհանուր առմամբ Ազգ. Սահմանադրութեան սրամարտութիւնները կէս առ կէս գործադրած չ'ըլլալու ամբաստանութիւնը ինչ ինչ կէտերու մէջ իրաւացի է ։

Եւ սակայն երբ աչքի առաջ կուենանք քաղաքական այն դժնդակ կացութիւնը, որուն մէջ կը պաշտօնավարէին Նախկին Պատրիարքը և ժամանակակից Վարչութիւնները. — երբ տաճկահայ տարրին բնաջնջումին Համիտական քաղաքականութիւնը ամբաստանութեամբ կը հետապնդուէր, ծանրանալով ու ճնշելով այն բոլորին վրայ, ինչ որ հայկական դրոշմ կը կրէր, մինչև անգամ «Հայաստանեայց», «Ազգային» և այլ այս կարգի անմեղ բաներն արգիլելով. — երբ Ազգ. Սահմանադրութեան վերաքննութեան և այս առթիւ առաջ դալիք անխուսափելի սեղմումներուն մեղմամբը Գամակիան արի պէս կախում էր Ազգ. Պատրիարքարանի գլխուն. — երբ յաճախ հնարաւորութիւն չ'կար՝ Սահմանադրական ժողովները երեսուն բերելու համար կարելի տուաւարութիւն իսկ ունենալ ։

Եւ նկատելով որ այսու ամենախիտ Օրմանեան Ս. Ժողով կատարուած են քաղաքականութիւնը ընտրութիւններ թէ՛ Ա. Պարտի մէջ և թէ՛ դատարաններ, ինչպէս որ Յանձնաժողովի թիւգլխաւորութիւն կցուած չ'ունենալ որ կերեւելայ ։

Այս բոլորին Յանձնաժողովս առ համագումար զայնացուց թէ՛ ընդունելով հանդերձ որ Սահմանադրական օրէնքը աստիճանագրուած չէ և չափ անդամներ գիտակցու-

ածար զանցառութեան ևն դրուած անոր արտադրութիւնները, բայց վերոյիշեալ պայտճառաբանութեանց հիման վրայ Յանձնաժողովս դատարանի չ'զսնէր Օրմանեան Ս. Ժողովացիքը ։ Իսկ Սահմանադրութիւնը գործադրելու եղանակին քննութիւնը համարադրուած էր կը վերաբերի ։

Ե. — Կարապետ Բախանայ Թեղալեանի խնդրին առթիւ կատարուած քննութիւնը յայտարարուած ։

Որ 1906 Գեղարքներ 12ին, Կրօն. Ժողովի իր ԺԱ. նիստին մէջ նկատողութեան է առած Կեսարիոյ առաջնորդ Ս. Ժողովի տեղեկագիրը և «Նկատելով որ քահանայն յանդիմանաւ ուսանց առաջնորդ Ս. Ժողովի հաւանութեան և ժողովրդեան ընտրութեան ու հաճութեան, զապաղողի ձեռնադրուած է ի Սիւս, նկատելով որ ուր որ պաշտօնավարութեան դրացած է, զայն թակուելիս պատճառած է, վերջապէս նկատելով որ Կարապետ Ե. Գ. Գաղաթեանի աղջկան նշանախօսութիւնը հարսանեաց շարժումն տեսակ տեսակ գրգռութիւններով եւ ընկ տալով զայն կը ժախջիտէ առանց առաջնորդարանի գիտութեան՝ ուրիշ երեստարգի մը հետ պատկերու ընկ, որպէս միանգամայն միշտ իր քահանայական կարգէն լուծուող հրահանգի զայն ապագային մէջ չ'ընդունելու պայմանով, և զայն հաղորդել Ս. Առաջնորդին ի գործադրութիւն» ։

Կրօնական ժողովի այս նիստին ներկայ չէ եղեր Նախագահը Օրմանեան Ս., տկարութեան պատճառով ։

Այդ որոշումը արուելէն 6 օր յետոյ, այն է Դեկտ. 18ին, Օրմանեան Ս. հետեւեալ գրութիւնը կուղղէ Կեսարիոյ առաջնորդ Տ. Տրքաւ Եղ. Պալեանին՝

«Ազգ. Պալե. Վարչութեան Կրօն. Ժողովը կարգաց տեղւոյ Տ. Կարապետ քահ. Թեղալեանի արարքներու նկատմամբ ձեր կատարած քննութեան նշանակելով 11 թուակիր մանրամասն տեղեկագիրք ։ Ժողովը նկատելով որ (\*)... իր քահանայական կարգէն լուծել պաշտած ճանչցուեցաւ, բայց մենք առայժմ կարգադրութիւնը քաւական համարեցինք, դուք գիտատանայ, թէ ոչ կարգադրութեան վէճեր կը գործադրէք» ։

(\*) Մ. — Ըստ վերաբերեալին թուելով ։

★

Ա. Նինչ ամբաստանող Տ. Գրիգորիս Վ. Պարաքեան կրէ թէ՛

«Կեսարիոյ Կարապետ քահ. Թեղալեանի կարգադրութեան խնդրին մէջ Կրօնական Ժողովի որոշման հակառակ Օրմանեան Ս. Կրկին կարգ տուաւ, Ժողովի աստիճանագրութիւնն եղծելով և «Կարգադրութեան» բառը «կարգադրել» դարձնելով իր ձեռագրով ։ Եւ Թեղալեան քահանան ցարկ կը քահանայագործէ» ։

★

Յանձնաժողովս առանձին գրութեամբ մը դիմեց Օրմանեան Ս. Ժողովի և այս առթիւ անոր բացատրութիւններն ուղեց ։ Ի պատասխան ասացաւ հետեւեալ գրութիւնը՝

«... բացատրութիւն կը պահանջէր 1906 Գեղարքներ 12ին Կրօնական Ժողովի կողմէ արուած որոշում մը փոփոխութեամբ գործադրելու վրայ ։

«Խնդիրը կը յաճի Կեսարիոյ քահանաներէն Տ. Կարապետ Թեղալեանը կարգադրած հրահանգին չուրք, որուն առայժմ կարգադրելու հրահանգը եւ Կեսարիոյ Առաջնորդին ։

«Գործը մասնաւոր խնդիր մըն է՝ ընդհանուր կարեւորութիւն չունեցող, իսկ անոր գրութիւններն ալ ձեռք չ'են որ մանրամասնութեամբ պատասխանեմ. ուստի լոկ յիշողութեամբ կը նշանակեմ հետեւեալները ։

«Անմիջապէս գիտողութեան պատճառ կը պահանջ, որովհետեւ այն միջոցին տկարութեամբ կը մնայի, և քանի չ'արթնան ժողովի չ'զանուեցայ, նոյն լոկ նամակն ալ աւելորդաբար կ'ըլլամ ։

«Փաղկովն արդարեւ չ'ընկալուեալ և չ'ընտաճուեալ համար մասնակի գործադրութիւնը հրահանգած ժողովը, որովհետեւ առ պղծմ կարգադրելութեան՝ կարգադրութիւնը չէր լուծուած» ։

«Մանուկն ու իրողութիւնը ծածկած չեմ, և ժողովին արդարեւ ալ յայտնադէս հաղորդած եմ Առաջնորդին, որ չուսով կրնար լրացուել իմէ պէտք ըլլար, կամ որոշումն կրկնուէր ։

«Գիտողութեան մասին կը յիշեմ որ Տ. Կարապետի խնդրին մէջ չ'առ մի անձնական վէճեր ալ փառնուած էին, նոյնիսկ Առաջնոր-

դին հետ, և պէտք էր մանրամասն կերպով գննել, մինչ Ժողովը չ'ապաւրդ վերջնական որոշման հասած էր ։

«Ընդհանուր կերպով ալ սկզբունքս էր պատկանելը աստիճանով բաժրացնել, և Կարգադրութիւնը ամէնէն վերջը վճռել, քանի որ եկեղեցական կեանքին տեսակէտէն մահաւան զատապարտութեան կը համեմատի, մինչ Տ. Կարապետի վրան ուրիշ պատիւ մը տնօրինուած չէր ։

«Եթէ գործը իմ գիտողութեանէս ետքը որ և է ընդդիմութիւն կրած ըլլար, հարկաւ որոշումը կը կրկնուէր, կամ թէ ժամանակին դանդաւոր կամ գիտողութեան նիւթ եղած ըլլար, մինչ ոչ մէկը տեղի ունեցած չէ ։

«Վրկուած նամակն ալ զաղանի եղած չէ ։ Թէ՛ Առեւտրային ստորագրող վարդապետը և թէ՛ ամբաստանութիւն յարաքանդ վարդապետը, երկուքն ալ այն ատեն Կրօնական Դիւանի մէջ քարտաւարութիւն կրէին. և նախնային անտեղեկ չէին ։

«Իմ տեսութեանցս իրականութիւնն ալ ստուգուած է անով, որ քիչ ետքը Կրօնական Ժողովը Տ. Կարապետ Թեղալեանի քահանայագործութիւնը արտօնած, և յետոյ ալ Կեսարիոյ վիճակէն դուրս պաշտօնի կոչած է» ։

Եւ, իրօք, Տ. Կարապետ քահ. Թեղալեան վերադարձնելով իր քահանայական պաշտօնը, անցեալ տարի Կիլիկիան արհաւիրքներու միջոցին հաճախակեցաւ ի Համիտիէ ։

Հարկ եղաւ Օրմանեան Ս. Ժողովը փերջին տեղեկութիւնն ստուգել, ուստի Նախկին Վարչութեան Կրօնական Ժողովին աստիճանագրութիւնները քննելով անտուեցաւ որ 1907 Հոկտեմբեր 23ին Ս. Պատրիարքարանի կողմէ արգ խնդրելու եղած է՝

«Խնդրողին Կատարի վիճակագրի Կարապետ քահ. Թեղալեանին» ։

«Նիստին ներկայ են Նախագահը՝ Օրմանեան Ս., և 10 ժողովականներ, ի թիւս որոց 3 երկախարս, 2 վարդապետ և 5 քահանայ ։

Ահաւարիկ ժողովին որոշումը ։

«Ժողովն նկատելով որ 1906 Գեղարքներ 12ին նիստին մէջ պաշտօնէ կարգադրուած է զայն ի գիտողութիւն և անտի միջև ցայս ուրիշ հար գանգաւ մը չէ նպատակ անոր նկատ-

մամբ, բաւ համարեց անոր 10 ամսուան պաշտօնազրկութիւնը և որոշեց գրել Կեսարիոյ Ս. Առաջնորդին որ արձակէ զայն արգելքէ»:

Ուստի Յանձնաժողովս սոյն ամբաստանութեան մէջ որ և է դատապարտութեան հիմք չ'դնեն: Նկատելով որ Կրօնական ժողովը ընդունած է այդ կարգադրութիւնը, իր Ս. Նիստին մէջ և բաւեր փոխելու համար Օրմանեան Ս. ատենադրութիւնը եղծած չէ, ինչպէս քննութիւնը ցոյց տուաւ:

## Դ.

### ՀԱՇՈՒԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Նախորդ Քաղ. ժողովը (Գարսեան էֆ. Ստեփանակաւութեամբ) Յանձնաժողովի կազմութեան նպատակն ու բնոյթը տարրեր կերպով ըմբռնելով՝ յաճախ մեզ կը շփոթէր Հաշուեքննիչ Յանձնաժողովի մը հետ և Օրմանեան Ս. պաշտօնավարութեան ժամանակին վերաբերեալ կարգ մը հաշուական խնդիրներ, որպիսիք են, օրինակի համար, Սրբանորթի, Անտրօնիկ Իօանէսքիւի կտակին, Մուշի և Կարնոյ առաջնորդներուն, Մելիքեան էֆ. և այլոց հետ առնչութիւն ունեցող խնդիրները, — ասոնք կը զրկէր մեզ ի քննութիւն: Յանձնաժողովս ամէն անգամ ալ կտակաւորէր պէտք եղած մակագրութեամբ վերադարձնել զանոնք Վարչութեան, նկատել տալով թէ մեր պաշտօնը չէր քննել Օրմանեան Ս. պաշտօնավարութեան համարատուութիւնը և հաշիւները, այլ լոկ իր դէմ եղած այն ամբաստանութիւնները, որոնք Ազգ. ժողովի կողմանէ կը յղուէին մեզ ի քննութիւն:

## Ե.

### ՕՐՄԱՆԵԱՆ Ս. Ի ՀԱՄԱՐԱՏՈՒԹԵԱՆ ՎԵՐՈՐԵՐԵԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Յանձնաժողովս նոյն կերպով վարուեցաւ նաեւ այն խնդիրներուն ու «ամբաստանութեան» հետ, որոնք Օրմանեան Ս. կամ անոր պաշտօնակից Վարչութեան համարատուութեան կը վերաբերէին:

Այդ կարգին կը պատկանէին՝

1. — Իզգէթ և Թահսին փաշաներուն հետ Օրմանեան Ս. ռենեցած յարաբերութեանց պարագան:
2. — «Իրեն և իրեններուն պատուանշաններ առնելը»:
3. — Օրմանեան Ս. «գիմուներուն վերանորոգելուն» պարագան:
4. — Պատրիարքարանի մէջ կասկածելի անձեր ու լրտեսներ պահելու պարագան:
5. — Պատրիարքական պաշտօնէն չհրաժարիլ, եւայլն:

Այս բոլորը համարատուութեան մաս կազմելուն, ի հարկէ առանձին քննութեան պիտի ենթարկուին:

## Զ.

### ՀԱԿԱԿԱՐԾԻՔ ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐԸ ՍԱՍՏԵԼԸ, ԱՆՈՆՅ ՍՊԱՌՆԱԼԸ ԵՒ ՀՐԱԺԱՐԻՆ ՈՒՋՈՂՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԱՐԳԻԼԵԼԸ

Ամբաստանողներն են՝

Տ. Տ. Պալաքեան և Դուրեան վարդապետները և Աշճեան ու Էքսէրճեան քահանաները:

Առաջին երեքը կրօնն «1. — Իրեն հակակարծիք գտնուող ժողովականաց նախորդ Պատրիարքը սպառնացած է վտարել ժողովէն:

2. — Յանգուզն կերպով խօսող և արդարացի կերպով քննադատող ժողովականաց իւր սենեակը կանչած, յանդիմանած և լոկ յանձնարարած է՝ երկուդ առթող խօսքերով:

3. — Մի քանի անգամ ժողովի չեկող և հրաժարելու մտադիր ժողովական մը գործով Պատրիարքարան գալու առթիւ գաղտնի ուսիկանութեան հարցաքննութեան ենթարկուած է և յանձնարարութիւն ստացած է պաշտօնը չարունակելու, որով և հրաժարելու մը տալիք ժողովականք անկ կացութեան մը մասնուած են»:

Տ. Հմայեակ քննչ. Էքսէրճեան կրօնն

«... Հրաժարումը վստահաւոր էր, որովհետեւ ժուրնալին մէջ կանցուէր, ինչպէս

## Է.

### ՍԱՍՈՒՆԻ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԻՆ ԱՆՅԱԿԱՅՈՒՄԸ

Ամբաստանող Ա. Գատարեան էֆ. և իր ձայնակիցները ամբաստանադրին մէջ կըսեն.

«Կամբաստանեմ, Սասունի երկրորդ ջարդին վերաբերեալ պաշտօնական տեղեկագիրներն անյայտացուցած լինելուն համար»:

Այս առթիւ Օրմանեան Ս. ի պատասխան կը գրէ՝

«Կըսէ, թէ Սասունի ջարդին տեղեկագիրները անյայտացուած են: — Պատրիարքարան յղուած թուղթի կտոր մը երբէք անյայտացած չէ»:

Իսկ յատենի Յանձնաժողովի նիստին յայտարարեց թէ՝

«... Ասոնց տեղեկագիրները կը մնային Պատրիարքարանի մէջ. եթէ երբէք ինձմէ վերջը գողցուէր կամ անյայտացուէր են, զայն չեմ գիտեր»:

\*\*\*

Յանձնաժողովի կողմանէ այս առթիւ եղած ընդարձակ պարտաւճիտները ցոյց տուին որ Սասունի ջարդին տեղեկագիրները ոչ միայն անյայտացած չեն, հասարակական հոգածութեամբ և խնամքով պահուած են անոնք, թուով 30 հատ, գրուած Տարօնի և Կարնոյ առաջնորդարաններուն ու զանազան ազգայիններու կողմէ: Մանրակրկիտ քննութիւն մը բանալով տեսնեք որ յիշեալ տեղեկագիրները օր օրին մակագրուած են Օրմանեան Ս. ձեռքով, պատշաճաւոր յղումները կատարած, ժողովներն անոնցմով զբաղեցուցած և փութալմանութեամբ ընթացք տուած է բոլորքի գործին:

Ա. Գատարեան էֆ. ինքն ալ ի վերջոյ, իր բերանացի ցուցմունքներուն մէջ, սրբազան զայն ըսելով՝

«... Տեղեկագիրներն «անյայտացուցած» ըսելով, ըսել կուզեմ թէ «Վարչութեան չէ ներկայացուցած»:

Թէեւ այս մեղմացուցած ամբաստանութիւնն ալ ու եւ է կերպով չ'հաստատուեցաւ, քանի որ, ինչպէս քիչ վերը ըսուեցաւ, Օր-

դմնիցս պատահեցաւ ինձ՝ բացակայութիւններու համար...»:

Ասոնց ի պատասխան Օրմանեան Ս. կը գրէ՝

«... Հակակարծիք կարծուած ժողովականները ժողովի մէջ պահելու ամեն ջանք ըրած և յաջողած եմ, երբոր պետական հրամանով անոնց հեռացումը պահանջուած է: Երբէք ժողովական յանդիմանած չեմ»:

Իսկ իր բերանացի ցուցմունքներուն մէջ կրօնն՝

«Ժողովներու մէջ նախագահ մը երբ նիստերուն կը գտնուի, իր համոզումը, իր տեսութիւնը կ'ունենայ. եթէ ժողովներու մէջ բան մը ըսեր եմ կամ ըրեր եմ, հարկ է այդ ըսածիս կամ ըրածիս վրէժը ցոյց տալ և հաստատել զայն: Ամէն ժողովական իր համոզման նպատակադարձ և եւեր ու դարձուածներ կը գործածէ իր տեսութեան համեմատ համար: — Ամենակին ժողովականներուն վրայ կարծեաց ազատութեան բնարարութեամբ ի գործ չեմ դրած. իրենց որոշումները ազատօրէն կուտային. արդէն եկեղեցականներէն ոմանք մինչև վերջը «մենք այստեղ կեցեր ենք նայելու» ընթացքն ունէին. երկու վարդապետները՝ Դուրեան Դ. և Էնոյ և Պալաքեան Գրիգորիս՝ դեռ սղայ էին. միեւնոյն ատեն քովս քարտուղար ալ էին. ուրիշ վարդապետներ միմի ըլլալուն՝ չ'զբտանք մարդ, այդ երկուքը կային: — Իսկ Տ. Հմայեակ Էքսէրճեան քահանայն բարկացեր է իր մէկ ազգականին ամուսնական խնդրոյն նրկատմամբ Կրօնական ժողովը տարրեր որոշում մը տուած ըլլալուն համար»:

\*\*\*

Քննութիւնները ցոյց տուին որ այդ ամբաստանութիւններէն որ և է մին հիմնուած չէ իրողութեանց և փաստերու վրայ. ամբաստանողներն ալ որ և է կերպով չ'կարողացան ըստանին հաստատել:

Ուստի և Յանձնաժողովս Դատապարտութեան հիմունքներ չ'գտաւ այդ ամբաստանութեանց մէջ:

մանեան Ս. օրը օրին զբարեկցուցած է Վարչութիւնը Ստանի ջարդին տեղեկագիրներով։ Ուստի Յանձնաժողովս սոյն ամբաստանութիւնը թողուց անհետեւանք։

Ը.

## ԱՂԹԱՄԱՐԱՅ ՌՄԲԱԿՈՒՄԱՆ ԱՌՓԻԿ ԼՈՒԵԼԸ

Կամբաստանեն Ա. Գաապարեան էֆ. և իր ձայնակիցներն ու Տ. Հմայեակ քահ. էքսէրճեան, նոյն ամբաստանողներով։

Առաջինները կրօնքն

«Աղթամարայ վանքին ծանօթ գէպքին տալիս լռութիւն պահած, ու այս ու նմանօրինակ պարագաներուն, ազգութենէն չ'ըզրած ինկուռն համար»։

Իսկ Տ. Հմայեակ քահ. էքսէրճեան կը գրէ՝

«... Աղթամարայ վանուց ամբակոծումին, Վանայ մէջ կատարուած սպանութեանց և թալանին առթիւ պահանջները որ Վարչութեան կնքով մատուցուելիք թաղրիրն օրինակը նախապէս ներկայացուի Վարչութեան, յապաւումներ և յաւելումներ կատարուին, եթէ հարկ ըլլայ և ապա կնքուի և մատուցուի պալատ»։

Ասոնց ի պատասխան Օրմանեան Ս. կը գրէ՝

«Կրտէ (Ա. Գաապարեան և ին.) — Աղթամարի գէպքին համար լռութիւն պահած է։ — Աղթամարի գէպքին համար ազուած թաղրիրներուն պատճենները գլխաւորին մէջ կեցած են»։

«Կրտէ (էքսէրճեան քահ.) — Աղթամարայ ամբակոծութեան և Վանայ սպանութեանց համար թաղրիրներուն ժողովին մէջ նախապէս չ'կարդացուելուն խնդիրը։ — Այսպիսի բան մը կրնայ ուղղուած ըլլալ, սակայն ժամանակ չ'կորսնցնելու համար, ժողովը՝ գրուելիք կէտերը ճշգրտով, չուսով խորհրդի և ներկայիցը նախապէս յանձնեց. և բոլոր այնքան գործադրուեցաւ. և ներկայուածը միւս գումարման հաղորդուեցաւ»։

Իսկ բերանացի ցուցմունքներուն մէջ կրտէ՝

«Աղթամարայ խնդրոյն նկատմամբ մէկէ աւելի թաղրիրներ տրուած է կառավարութեան

և չէ թէ միայն բողոքած ենք, այլ նաեւ վանքին նորոգութիւնը պահանջած ենք։ — Թագրիրներու օրինակները Պատրիարքարանի մէջ կը մնան, բերել տուէք զայն և նկատի առնէք անոնց պարունակութիւնը։ — Միայն Աղթամարայ Տեղապահ Արքեպիսկոպոսին մասին չատ չ'ձանրայանք, տեսնելով որ տակէն մերձեք սլիտի երևին»։

Ինչ կը վերաբերի թաղրիրի խմատը փոխելուն, այս առթիւ անո՞ թէ ինչ կը պատասխանէ Օրմանեան Ս. —

«Պարտաւ խոսք է այդ, եւ երբեք ժողովով որոշուած ու խմատըրուած թաղրիրներ չեմ փոխած, հայերէն չէին որ գրիչ խաղցնէի իմ կողմէն, տաճկերէն գրող մը չէի որ փոխութիւն ընէի, եւ առնա տուող էի, խորհրդադրուելէն էր, ինչպէս գիտէք, թաղրիրն նիւթն և հոգին կը գնահատէի, բառերու գործածութիւնը իմ չէր։ — Այսու հանգերձ ամենեւին ժողովին բերուած ու որոշուած թաղրիրները վերջէն չեմ փոխած։ — Պէտք է ըսեմ նաեւ որ երբեմն գործին տախտակահանութեան բերմամբ թաղրիր կը տրուէր կառավարութեան, բայց անմիջապէս յետոյ կը ցուցուէր ժողովին և համամտութիւնը կառնուէր։ — Եթէ երբեք այդ տեսակ բան մը կայ, պէտք է որ ամբաստանողը ինքը հաստատէ զայն՝ օրով և թուականով և նիւթով։ — Ժողովը վստահութիւն ունէր իմ վրայ, չուսով գործելու հարկ ըլլալուն, թաղրիրը կը մատուցուէր և յետոյ միշտ կը բերուէր ժողովին»։

\* \*

Յանձնաժողովս ի սկզբանէ անտի կը տեսնէր երկու ամբաստանողներուն անհաշտ հակասութիւնը։ Մինչդեռ Ա. Գաապարեան էֆ. իր ձայնակիցներով կրօնքն թէ Օրմանեան Ս. լռութիւն պահած է, էքսէրճեան քահանան թաղրիր տուած ըլլալը կը մատնանէ։

Քննութիւնը ցոյց տուաւ թէ Օրմանեան Ս. ո՛չ միայն լռած չէ Աղթամարայ գէպքին առթիւ, այլ մեծ կորովով բողոքած և իր պահանջներն ալ հետապնդած է։

Ուստի այս ամբաստանութեան ուղղակի հակառակն է որ կը հաստատուի։

Թ.

## ՄԻՋԱԳԻԻԳԻ ԵՒ ՊԵՏԻԿՈՒՄԵՆԻ ԳԵՐԵՋՄԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ ԽՆԴԻՐԸ

Կամբաստանեն Տ. Տ. Պալաքեան և Դուրեան վարդապետները և Աշճեան ու էքսէրճեան քահանաները։

Առաջին երեքն իրենց ամբաստանագրին մէջ կըսեն՝

«Օրթաքէօյի գերեզմանատան խնդրոյն մէջ բուն կերպով ընդդիմացողներէն մին ժողովոյ մէջ իւր մօտ կանչած է և հրամայած որ զգոյշ ըլլան և չ'խօսին, որպէս զի կայսերական պալատէն յետոյ չ'ամբաստանուին»...

Իսկ Տ. Հմայեակ քահ. էքսէրճեան կը գրէ՝

«Ընդդիմացանք Գրիգորիս և Դեմոս վարդապետաց հետ Պէշիկթաշի գերեզմանատան խնդրոյն մէջ, մինչդեռ ինք կը պնդէր յանձնումը կատարել»։

Յատկնի ժողովիս Տ. Հմայեակ քահանայ յարեց թէ՝

«Օրմանեան Ս. փոխանակ կրօնական աւանձնաշնորհմանց և աւանդութեանց պահպանման հետամուտ լինելու, Պէշիկթաշի գերեզմանատան խնդրոյն մէջ անոր հակառակը վարուեցաւ։ Այսինքն Կրօնական Ժողովին մէջ Ապրիլէն ստացուած թէգքերէն ոճէն կը հասկնանք թէ ինքն Օրմանեան Ս. թեկադրած էր այս բանը — Պէշիկթաշի գերեզմանատան յանձնումը»։

«Օրմանեան Ս. ի Պատրիարքութենէն առաջ պաշտօնավարող Վարչութիւնը ի սկզբանէ անտի թէ և որոշած է եղեր յանձնել, բայց չէր յանձնած. մինչդեռ Օրմանեան Ս. ինքը կայսրատէր յանձնումը փութացնել»։

Ասկէ զատ Տ. Գր. Պալաքեան վարդապետ յատկնի ժողովիս կը յայտարարէր թէ՝

«Օրթաքիւղի գերեզմանատան խնդրոյն մէջ Օրմանեան Ս. ուղեց ընթացք տալ՝ Ռուբէր Եաղըճեանի միջոցաւ Թահսին փաշայէն ստացուած գրոյն և ստիպեց Վարչութիւնը յանձնել գերեզմանատունը։ Եւ այդ կընէր Ռ. Եաղըճեանի գիրքն ամբաստնելու և աւանդանի իֆթարին ժամանակ իր համար ակնհայտ ընելու համար։ Բարեբաղդարար Սուլթան Համիտ մերժեց այդ խնդիրը և թոյլ չ'տուաւ որ Հայոց գերեզմանատունը գրաւուի»։

Այս մասին Օրմանեան Ս. հետեւեալ կը գրէ՝

«... Պէշիկթաշի գերեզմանատունը իրօք չէր յանձնուեր, այլ ճարտար դարձուածք մըն էր, որուն յաջող հետեւանքն ալ յայտնի է, վանդի գերեզմանատունը յանձնուած չէ։ —

Օրթաքէօյի գերեզմանատան խնդիր տեղի ունեցած չէ՝ այդ բանը ըսող ժողովրդականութեան ժամանակ, և եթէ խնդիր խնդրի խառնելով Պէշիկթաշը Օրթաքէօյի հետ կը շփոթեն, այդ բաւական է ցուցնել թէ որչափ թեթեւակի կազմած են իրենց յայտարարութիւնները, և ոչ իսկ խօսքերուն ճշտութեան և խնդիրներուն իսկութեան միտ դնելով»։

Օրմանեան Ս. իր բերանացի լուսարտնութեան մէջ հետեւեալ մանրամասնութիւնները տուաւ.

«Գերեզմանատան խնդիրը եւ չեմ յարուցած. երբ Թահսինը ինկածի պէս էր ժամանակ մը, Իզգէթ փաշան այդ խնդիրը յարուցեր էր. Յարութիւն Պատրիարքի և Բարթողի մէտի օրով Թագրիքեք կան քէ գերեզմանատունը տրուած է արդէն. Իզգէթի ձեռքէն աղատելու համար աշխատեցանք. խնդիրը ժողովին բերինք. Ժողովը ըսաւ թէ՝ արդէն տրուէր է ժամանակին, և տրուածը կուգէին մեզմէ. ուղեցին որ նոյնիսկ ծախու առնեն գերեզմանատունը. մենք երկու կէտի վրայ ծանրացանք և ըսինք՝

1. — Ամենեւին չենք ծախեր, զրամ չենք ընդունել».

2. — Ինչպէս որ մեռելները կը թաղենք յատուկ եկեղեցական արարողութեամբ, քրիստոնեայ բանուորներու աշխատութեամբ, մեռելական կառքերով, եկեղեցական հանդէսով և թափորով պէտք է փոխադրութիւնը կատարուի։ —

Այս պնդումներով յաջողեցանք փոխել խնդիրը և վերջ տալ անոր։ —

Օրթաքիւղի գերեզմանատան խնդրոյն համար ալ ուրիշ կերպ գործեցինք։ Ըսինք թէ քուրդացեալ վէպայէ շատ մեռնողներ թաղուած են այնտեղ. ասոնք խառնելու չի գար. հողին տակ ծածկուած միջբողոքները կրնայ ըլլալ որ տարածուին փոխադրութեան առին. Երբային ալ շատ մօտ է և այն։ —

Այսպիսի յայտարարութիւններով գործին մէջէն ելանք, աղատեցանք»։

\* \*

Գալով խնդրին պատմականին, Յանձնա-  
ժողովս հետեւեալը կրցաւ արձանագրել հոս. —  
Ազգ. Ընդհ. Երեսի. Ժողովը 1887 թ.  
փետ. 9-ին արաւարդ նիստ կը յատկացնէ  
Պէշիկթաշի ազգային գերեզմանատան խնդրին:  
Նիստին մէջ կը կարգադրուին օրուան Վարչու-  
թեան Խառն Ժողովին տեղեկագիրն, ուրկէ  
կը տեսնուի թէ՛

«Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի

Ազգային Ընդհանուր Ժողովոյ

Բայրիկչատակ Սուլթան Ապտուլ Ազիզ  
Կայսրն կամը յայտնած էր որ Երջողի կայսե-  
րական պալատան զէմ գտնուած Ազգ. գե-  
րեզմանատունն՝ ուր 1865 թուականէն ի վեր  
մտնելով թաղէն արգելուած է կայսերական  
բարձր հրամանաւ, պարտէզի վիճակի վերած-  
ուի, ծածկուելով գերեզմանաքարերը:

Սոյն հրամանն այն ատեն անմիջապէս  
գործադրուելով՝ գերեզմանատունը կը շրջա-  
պատուի և պարտէզի կերպարան մը կառանայ,  
սակայն այս վերջին տարիներս՝ յորում անոր  
շուրջն այլ և այլ շէնքեր կառուցուեցան, սոյն  
ազգային սեփականութեան պահպանութիւնն  
օր քան զօր մեծամեծ դժուարութեանց և  
մինչև իսկ անհարկութեան ենթակայ եղած կը  
գտնուի, հակառակ տեղւոյն Թաղ. Խորհրդոյ  
հանապազօրեայ հոգատարութեանց և հսկողու-  
թեանց, նոյնպէս և նախորդ և արդի Ազգ.  
Վարչութեանց ի դորձ գրած ջանից և ձեռ-  
նարկութեանց:

Իրաց այս վիճակին մէջ ահա՛, կայսերա-  
կան պալատան Սպարապետ Վսեմ. Ղազի Օսման  
փաշա, տարւոյս Յունի. 15 թուականաւ գրու-  
թեամբ մը կը հաղորդէ Պատրիարքարանիս՝  
Օգոստոսիս Սուլթանին բարձր կամքն, որ  
կը հրամայէր սոյն գերեզմանատան այլուր  
փոխադրութիւնն ինչ ինչ կարգադրութեամբը,  
որ բացատրուած են նոյն պաշտօնագրին մէջ:

Թէպէտև Ամին. Սրբազան Պատրիարք  
Հայրը խնդրոյն կրօնական հանգամանքը պա-  
տասխանապարով մը յայտնելով Նորին Վսեմու-  
թեան, խնդրեց որ գերեզմանատունն՝ առանց  
փոխադրուելու՝ վերածուի պարտէզի վիճակի,  
ինչպէս որ յառաջագոյն որոշուած և կազադը-  
րուած էր ազգովին, և այս կերպով զանազան  
գիմուսներ՝ ջանքեր և բանակցութիւններ տե-  
ղի ունեցան, և սակայն Վսեմափաշ Օսման  
փաշա իւր երկրորդ պաշտօնագրով ծանուց  
Վեհ. Սուլթանին բացարձակ կամքն, այն է՝  
փոխադրել գերեզմանատունը այլուր, բացա-

տրելով միանգամայն այն տեսութիւններն՝ ո-  
րոց վրայ հիմնած է Նորին Վեհափառութիւնն  
իւր բացորոշ հրամանին գործադրութիւնը:

Սոյն երկրորդ պաշտօնագրին վրայ վե-  
րադիտելով ունեցած զիմուսներն և բանակ-  
ցութիւնները չունեցան ուրիշ արդիւնք, բայց  
եթէ միանգամ ընդ միշտ հաստատել Վեհափառ  
Սուլթանին կամաց բացարձակ և ստիպողական  
բնութիւնը:

Արդ՝ Ազգ. Վարչութեան Խառն Ժողովը իւր  
զանազան գումարմանց մէջ խնդիրն իւր ամէն  
պարագայիւր և բնական հետեւանայց նախա-  
տեսութեամբ ուշադրութեան առնելէ յետոյ՝

Նկատելով որ Հայաստանեայց Ս. Եկեղեցին  
իւր գոյութեան առաջին դարերէն սկսեալ իւր  
Եկեղեցիները հանգերձ գերեզմանատամբ ա-  
նեղծ և նուիրական վայր ճանչնալն՝ իրր ա-  
ւանդութիւն ընդունած և այնպէս քարոզած  
և ուսուցած է:

Նկատելով որ գերեզմանատան մը ամ-  
բողջական փոխադրութիւնն այլ ուրեք՝ ի նախ-  
նեայ անտի տեղի ունեցած իրողութիւն մը  
չէ, և այսօրինակ պահանջմանց արջիւ՝ յան-  
ցելումն գերեզմանատանց պահպանութեան  
սկզբունքը պաշտպանուած է բարեպաշտական  
զգացմամբ, ինչպէս ցոյց կուտան Համագու-  
մար և Կրօնական Ժողովոյ արձանագրու-  
թիւնք:

Նկատելով որ Կրօնական Ժողովը, ըստ  
իւր եկեղեցական կոչման և ըստ 28րդ յօդ-  
ուածոյ Ազգային Սահմանադրութեան, պար-  
տաւորեալ է Հայաստանեայց Եկեղեցւոյ դա-  
ւանութիւնն և աւանդութիւններն անխախտ  
պահել:

Խառն Ժողովն սոյն նկատմանց առջև ջա-  
նհար եղած է ըստ ամենայնի՝ ներկայ խնդրոյն  
կարգադրութեան ելք մը գտնել, և այս նպատա-  
կաւ ամէն հնարաւոր միջոց ի դորձ գրած է,  
ինչպէս ակնյայտնի կերելի այս մասին տեղի  
ունեցած բանակցութիւններէն և փոխանակեալ  
պաշտօնագիրներէն, այլ սակայն՝

Ըստ որում անկարելի եղած է գտնել մի-  
ջոց մը՝ որ գոհացում տայ խնդրոյն փափուկ  
և տագնապալից վիճակին,

Ըստ որում Կայսերական բարձր հրամա-  
նին հարկեցուցիչ է, և կարելի չէ անխոյժ  
մնալ,

Ըստ որում սահմանադրապէս Վարչական  
Ժողովներն երբ իրենց ձեռնահասութիւնէն վեր  
գատն խնդիր մը, պարտաւոր են Ազգ. Ժո-  
ղովոյ որոշման գիմել,

Հետեւեալը, Ազգ. Կեղը. Վարչ. Խառն  
Ժողովն կուգայ առաջարկել Պատկ. Ժողո-  
վոյ որ հաճի՝ իրր ներկայացուցիչ ընդհանուր  
Ազգին՝ իւր չըջանայեաց իմաստութեամբն կա-  
տարեալէս իմաստաւորել խնդրոյն փափուկ-  
ութիւնն և ստիպողականութիւնն, և տալ մեղ  
իւր հրահանգն ու որոշումն իւրեւումն խնդ-  
րոյն:

Ընդ գրոյս կը մատուցուին սոյն խնդրոյն  
նկատմամբ Կայսերական Պալատան և Պատ-  
րիարքարանիս միջև փոխանակեալ գրութիւնք:

Ի գիմաց Կրօնական Ժողովոյ, Ատենապետ՝  
ԽՐԻՄԵԱՆ

Ի գիմաց Քաղ. Ժողովոյ, Ատենապետ՝  
Յ. Կ. ՆՈՒՐԵԱՆ

7 փետր. 1887

Ի Պատրիարքարան Հայոց

Կ. Պոլիս

Այնուհետև տեղի ունեցող վեճարանու-  
թիւններէն կը պարզուի թէ՛

«... Այս գերեզմանասան խնդիրը նոր  
չէ, ԵԱՐԻՆԵՐԷ հեճ ԵՐԵԱՆԵ եկած եւ բազմիցս  
կրկնուած է»:

Ի վերջոյ Ազգ. Ժողովը կորոշէ՝

«Վերադարձունել առ Ազգ. Վարչութիւն,  
յանձնարարելով որ վերջին ջանք մ'ալ ընէ  
առանց ոսկերոտեաց փոխադրութեան զայն  
կարգադրելու»։ իսկ ոսկերոտիքը չի փոխա-  
դրելու համար փորձելիք վերջին ջանքին չի  
յաջողած պարագային մէջ՝ ընելիք տնօրինու-  
թեան իրր պայման Ժողովը կորոշէ՝

«Առաջին՝ Գերեզմանատանց նուիրակա-  
նութեան արժանաւայել պատկառանքն ու  
յարգանքը պահելով, և երկրորդ՝ Ազգային նը-  
մանօրինակ և այլ սեփականութեանց պահպա-  
նութիւնն ապահովելով, գոհացում տալ Օգոստ.  
Կայսեր պահանջման, բացառիկ զոհողութեան  
հանգամանք, յապտոյց սիրոյ և անձնուի-  
րութեան ազգին՝ առ թանկագին անձն Նորին  
Վեհափառութեան»:

\*\*\*

1906 Մարտ 22ին ալ Ազգ. Վարչութեան  
Խառն Ժողովն արտակարգ նիստ կը գումարէ  
զլիաւորաբար սոյն խնդրով զբաղելու: Նա-  
խագահը՝ Օրմանեան Ս.՝ վերոյիշեալ տեղեկու-  
թիւններն հաղորդելով հանգերձ Ժողովին,  
կաւելցնէ թէ՛

«Անցեալ կիւրակի օր Վսեմ. Եազրճեան  
Ռոպէր Էֆէնտի առ ինքն զալով՝ պատմած է

թէ Կայս. Պալատան երկրորդ քարտուղար  
Վսեմ. Իզդէթ փաշա զինքը հեռագրով պարտա-  
կոչել տուեր և հաղորդեր է իրեն Վեհ. Կայ-  
սեր մէկ Իրատէն, թէ Նորին Վեհափառու-  
թիւնը կուգէ Պէշիկթաշի Հայոց գերեզմանա-  
տան մէկ մասին վրայ տէքօ մը չինել տալ.  
և կը փափաքի որ այդ գետինը տրուի»:

Ապա կը կարգադրուի արքունեայց հրամա-  
նատար Ղազի Օսման փաշայի ուղղած հրամա-  
նագիրն, որով կը յանձնարարուէր նոյն գե-  
րեզմանատունը պարզել, փոխանակելով զայն  
ուրիշ տեղի մը՝ հեռ, ուր ոսկերոտիք և սա-  
տապանաքարք փոխադրուին և փոխարէն կը  
խոստացուէր Վեհ. Սուլթանէն արտօնութիւն  
ստանալ Բանկալթիի գերեզմանատան մեծ դո-  
ղոցին վրայ ցոյց արուելիք անթաղ տեղերը  
կարուծներ կառուցանելու, զինուորական  
զպրոցի մանէթի կողմը նոր զպրոց մը հիմնե-  
լու, և եկեղեցին ու դպրոցը իրենց արդի  
գիրքին մէջ՝ նորոգելու և միանգամայն այս  
չինութեանց ի նպաստ ցրուելիք հանգանա-  
կութեան տոմսակաց մեծագոյն մասն առնելու:

Կը կարգադրուի նոյնպէս՝

1. — Տ. Մակար Կաթողիկոսի կոնդակն,  
ուղղած Տ. Յարութիւն Պատրիարքին, որով  
կը յանձնարարուէր՝ այդ գերեզմանատան Կայ-  
սերական պալատին կից լինելուն և Նորին Վե-  
հափառութիւնն իւր անձին համար նոյն հողին  
պէտք ունենալուն, զայն բացառաբար յանուն  
ազգի նուիրել Նորին Կայս. Վեհափառութեան:

2. — Եպիսկոպոսաց մէկ գիրն, որով  
կընդունէին Ամենայն Հայոց Հայրապետին ա-  
ռաջարկութիւնը:

3. — Տ. Յարութիւն Պատրիարքի վեր-  
ջին անգամ Կայս. պալատան մէջ ունեցած  
բանակցութեանց յայտագիրն, որմէ կիմացուէր  
թէ Վեհ. Սուլթանն հրամայած է որ ոսկերո-  
տիք չ'փոխադրուին այլուր. և գերեզմանա-  
տունը նոյն վիճակին մէջ մնալով հանգերձ,  
վանդակորմով չըջալատուի և ծաղիկներ տըն-  
կուիլ և պարտէզի գիրքի վերածուի:

Խառն Ժողովը խնդրին անցեալ վիճակին  
վրայ պէտք եղած բոլոր տեղեկութիւններն  
ստանալէ ետք՝ նկատելով որ այս գերեզմա-  
նատան խնդիրն արդէն վերջացած է և յանձ-  
նումը որոշուած ժամանակին, կորուստի ա-  
ռանց պայմանի և փոխադրութեան յանձնել.  
Ս. Պատրիարք Հօր յանձնեց որոց հետ որ անկէ  
բանակցելով ի դորձ գնել պէտք եղածը:

\*\*\*

Յանձնաժողովն այս բոլորն ուսումնասիրել է յետոյ նկատելով՝

Որ Պէշիկթաշի գերեզմանատան յանձնումը որոշուած է Ազգ. Ժողովով և Կաթողիկոսական կոնգրակով,

Որ Ռուպէր Եղգըճեանի յայտարարութեան հիման վրայ խստիւ կը պահանջուէր յանձնուի,

Որ քաղաքապետ Ռէշիտ փաշայի 1906 Ապրիլ 11. Յունիս 26 և Սեպտեմբեր 27 հրամանագիրը նոյնը կը պահեն,

Որ իսկապէս մէջ որոշուած է յանձնել և ըստ այնմ յանձնարարած է Օրմանեան Ս. ին գործադրել տալ սոյն որոշումը,

Որ այնու ամենայնիւ Օրմանեան Ս. յաջողած է բանակցութեանց այնպիսի ընթացք մը տալ, որ գահընկէց Սուլթանը ետ է կեցած իր մտադրութենէն, որով Պէշիկթաշի գերեզմանատունը մնացած է ազգին։ —

Յանձնաժողովն դատաւարութեան հիմունք չի գտնել այս ամբաստանութեան մէջ։

## Ժ.

### ԱՐՄԵՆԱԿ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆԻ ՍՊԱՆՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Միակ ամբաստանողն է Ղազարոս էֆ. Չալաքեան, որ կրտսէ՝

«Կամբաստանեմ Պատրիարքը իրեն անսիրտ, բոլորովին անկարեկիր գտնուած է բանտարկեալներու և աքսորեալներու մասին. բանտերու մէջ խեղդուած, չարչարանքներու տակ սպաննուած և այլոց գիւղերի Պատրիարքարան յանձնուեցան, ինք չ'ըտղոքեց, կառավարութեան մօտ իր հաշիւները չ'խանգարելու համար. . . »:

Իսկ բուն խնդրոյն մասին տուած իր գրութեան բացատրականին մէջ Չալաքեան էֆ. կը գրէ՝

«1908 Փետր. 23-ին յաւէտ ողբացեալ Արմենակ Գարակեօզեան քնորդիս ձերբակալեցին և ոստիկանական բանար զրին. նոյն ամսոյ 27-ին 4 օր վերջ չորեքշաբթի օր Պատրիարքարանէն բարապան մը լուր բերաւ թէ Մեղիքեանը քեզ տեսնալ կուզէ, անմիջապէս չնչասպառ Պատրիարքարան վազեցի մտայոյզ վիճակով թէ արդեօք ինչ կար. ծայրայեղ

փութկոտութեամբ հետաքրքիր եղայ. վերջապէս խեղդորոյս, ափսոս, դժբաղդ ճգնաժամի մը մէջ գտնուեցայ, երբ իմացայ սրճակեղեմ մահիւր և այլ յայտէ լեալ խեղդորոյս ինկայ. սխալեմէ վերջ զիս վար իջեցուցին և մէկերկու անձերու հսկողութեան յանձնելով կառքով վաճառատունս վերադարձուցին, իրաց բնական ընթացքով կուշտ ու կուռ լալու համար։

Հետեւեալ օրը եղբօրս Տիգրան Չալաքեանի և Անտոն էֆ. Նախնիքեանի հետ Պատրիարքարան գացի, թաղման արարողութիւնը կարգադրելու և միանգամ Պատրիարք Սրբազանը տեսնելու և այս սիրտ բղբոտող ահուկ խեղճութեան մասին կարծիք տալ առնելու։ Ինչպէս որ մի քիչ դեղերից և ժամ մը սպասման սրահը սպասելէ վերջ Սրբազանին գալուն, ունկնդրութիւնը խնդրեցինք, ընդունուեցանք և երեքնիս մէկ ներս մտանք։

Գաղաքավարական ձևակերպութենէ վերջ այն ինչ հարկ եղածը պիտի խօսէի և պահանջէի, յանկարծ ծանօթ սրիկայ և խաֆիյէ Մխթար Շահինը ներս մտաւ, որ՝ ֆէսը ետև ձգած՝ չարաշուք ճակատը բաց և թեւերը ետև կապած սաղաթեղական ձեւով ոտքի վրայ կեցած Պատրիարքին եւ մեր դէմ, աջ ու ձախ ալիւնարի ձգելով, առանց պատկառանքի և առանց քաղաքավարութեան, միչդեռ սակէ առաջ նախ քան ներկայանալ Պատրիարքի, մեզ կը հարածէր։ Մենք որ գաղտագողի հետամուտ էինք տեսնալ ողբացելոյն գիւղը, ինչպէս որ յաջողած էինք, երբ յիշեալ հրէշը իրազէ կըլլայ, բարկութեամբ կը յանդիմանէ պահապանները թէ ինչո՞ւ ցոյց տուած են դիակը, հակառակ իրենց եղած պատուէրին։

Իրաց այս վիճակին մէջ, մենք չ'կրցանք ու է բան խօսիլ. ակուսներնիս սեղմեցինք և պահ մը խորհրդաւոր լուծութեան մէջ մնացինք. մեր այս խորհրդաւոր լուծութիւնը, բացարձակապէս կը յայտնէր չարաշուք ուրուականին ներկայութեան անպատեհութիւնը, ասոր հակառակ կարծես թէ Օրմանեան լեզու կտրած և խկապէս հրէական սրամտութեամբ, ըստ մեզ յանդիմութիւն նկատուած պահանջի մը տարտամ ընկրկման հանդէպ, ճարտար դարձուումով հոգածու լինելու հաւատովքը տալու և միանգամ ներշնչելու, զօրաւոր միջոց և առիթը նկատեց և պահանջեց որ հաճութիւննիս տանք խնդիրը պաշտօնապէս պրպակելու. մենք արդէն սատանայի ուրուականին ներկայութեան նէն սարսափած ու է պահանջում մը ընկելու

համար եկած չըլլանիս յայտնելով, Նորին Սրբազանութեան յանձնեցինք պարտ ու պատշաճը, առարկելով թէ ես իմ ինքնութիւնս կորուսած եմ և զիտակցութիւնս խեղաթիւրուած է։

Վերջապէս հրամայեց Նորին Սրբազանութիւնը որ թաղման խորհուրդը կատարուի։

Նոյն չարթուն Մարտ 2-ին կիւրակի օր Օրմանեանին տունը գացի ըսելիքնիս ըսելու. ուր Կիւմիւշկէրտան Գրիգոր էֆ. և Միհրան Տէր Ներսէսեան էֆ. ներք կային. դարձեալ Նախնիքեան էֆ. մէկտեղ էր. այլևս իր տանը մէջ ազատ կերպով խօսեցայ և ըսի Սրբազան՝ կը պարտէիք զիտակցութիւն կատարել տալ և պարտ ու պատշաճը անօրինել. այս խօսքերուն վրայ անպատկառօրէն առարկեց թէ իրեն ներկայացած օրերնիս ինչո՞ւ չ'պահանջեցինք, քանի որ յիշեր ալ է մեղի. պատասխանելի թէ Շահինի ներկայութիւնը արգելք եղաւ ըսելիքներուս, քանի որ անոր խաֆիյէ ըլլալը ամէն մարդ գիտէ. վերջապէս չերկարեցի և մի քիչ մնալէ վերջ հրաժեշտ տուինք։

Օրմանեան իբր ճարտար և խարդախ տեղիկեատար, այն օրուան Շահինի ներկայութեան իր հոգածու և խնամատար Պատրիարք ըլլալը չ'կրնալ կըցուցած ըլլալը հատկաւորով, չորեքօրեայ թաղեալի մը համար առանց գերեզմանէն հանելու զիտակցութեան վկայադր մը կը պատրաստէ հին թուականաւ, և հատառակ կուտայ Մխթար Շահինի և քէհեա Յովսէփի թէ իրենք (այսինքն վերջի երկու-եակները) քննած և հաստատած են ինչինքը այրած ըլլալը, և ապա թաղուած է. Օրմանեան սկիզբէն մինչեւ վերջ վարած պաշտօնին ձեւով և այս անգամ ալ պարտաճանաչ Պատրիարք մը ըլլալուն պատրանքը ունենալու չ'զոհեալութեամբ կը պահէ յիշեալ վկայագիրը չեմ գիտեր ինչո՞ւ համար, հեռաւոր հորիզոնական սպառազի համար անշուշտ. . .

Արդ՝ պատուարժան Յանձնախմբից ուշադրութեանը կը յանձնեմ այս սրտաճմրկ պարագան ևս, ամբաստանելով նախորդ Պատրիարքն իբր զեղծարար և ամեն չարեաց մակարթ։»

Օրմանեան Ս. այս առթիւ իր պատասխանադրին մէջ կըսէ՝

«Կը յիշէ (Չալաքեան էֆ.), թէ երբ «բանտերու մէջ խեղդուած, չարչարանքներու տակ սպաննուած և այլոց գիւղերի Պատրիարքարան յանձնուեցան, ինքն չ'ըտղոքեց,

կառավարութեան մօտ իր հաշիւները չ'խանգարելու համար»։ — Այդ յոգնակի ձեւին ներքեւ կը գիտէ յիշեցնել իւր քնորդոյն, խեղճ Արմենակ Գարակեօզեանի արկածը։ Բայց եթէ մոռացկոտ մը չէ, կամաւ Ստող կըլլայ, երբ կը ծածկէ, որ այս զիպուածին մէջ բոլորեց թագրիւն ալ գրել տուի և պաշտօնական զիտակցութեան համար թաղումը արգիլեցի. իսկ իրենք, Ղազարոս և Տիգրան Չալաքեան եղբարք, անձամբ ներկայանալով խնդրեցին և ազալեցին, որ պաշտօնական քաղեր չ'առնեմ և դործը չ'զրգուեմ, վստիկ ոստիկանութենէն կանչուած, և անձնատալութեան համագումար լինելին յայտարարած, և այդ խնդիրը չ'յուզելու պատուէր ընդունած են, և Պատրիարքարանի գիմումին հետեւանօք կրնան կտակածի ենթարկուիլ և նեղութեանց հանդիպիլ։ Իրենց այդ թախանձանքին վրայ միայն, գրուած թագրիւրը ետ թողուցի, և թաղման հրաման տուի։ Այդ ամենը յայտնապէս հրապարակաւ կատարուած գործողութիւն է։

Բերանացի ցուցմունքներուն մէջ Օրմանեան Ս. հետեւեալ լուսաբանութիւնները տրուաւ. —

«Արմենակի մարմինը երբ բերուեցաւ Մայր Եկեղեցի և ինձ իմաց տրուեցաւ, ես թաղումն արգիլեցի, թագրիւրը պատրաստել տուի, բժիշկ զրկեցի որ զիակը տեսնելէ յետոյ «նշաններ կան» ըսաւ. բժշկական քննութիւն պահանջել ուղեցի, բայց յանկարծ Չալաքեանն և հետը ուրիշ մէկը թէ՛ Պատրիարքարան և թէ՛ մեր տունը քովս եկան երկու անգամ, կրկին և կրկին խնդրեցին ինձմէ որ դործը չը խառնեմ. «մեղի գէշ կըլլայ, Սրբազան, մի՛ խառնէք» կըսէին. այս կրկնակի խնդրանքներուն վրայ ձեռնարկէս ետ կեցայ, իրենք բացարձակապէս չուզեցին որ ձեռնարկեմ դործի։ —

Չեմ յիշեր թէ Շահինը այն միջոցին Պատրիարքարանի իմ սենեակս մօտ էր, թէ իսկ ատանկ եղած ըլլար, և եթէ իրենք կը քաշուէին անկէ, կրնային խնդրել որ ատանձին մնայինք և ես դուրս կը հանէի զայն։ Բայց միթէ՞ նոյն խնդրանքը չըլլին մեր տունն ալ անձամբ գալով. հոն Շահին չ'կար և նորէն խնդրեցին որ դործը չ'խառնեմ և ես ալ լսեցի զիրենք։ Ահա իրողութիւնը իր ճշտութեանը մէջ։ —

Իրենց վնասը մէջ բերելով մինչեւ վերջը ազալեցին որ այդ խնդրով չ'զլաղլիմ։»

Յանձնաժողովն հանգամանորէն քննեց այս ամբաստանութիւնը և ամբաստանողին ու վկաններուն յայտնութիւններէն ու համոզումը դոյացուց թէ՛ թէ և այս մասին թաղրիր գրուած չէ և քննող բժիշկն ալ ո՛վ ըլլալը չ'ստուգուեցաւ, բայց հաւանորէն Ղ. Չպլաքեան և Նախնիքեան էֆ. ները պահանջած են Օրմանեան Ս. Էն չ'հետապնդել խնդիրը, աչքի առաջ ունենալով այդ պարագային ծագելիք չարիքները և նկատելով որ Նախնիքեան էֆ. ինքն իսկ կը խոտովանի այդ իրողութիւնը,

Նկատելով նոյնպէս որ Օրմանեան Ս. խոշտանգումներու համար ազդու թաղրիրներ տուած է արդէն, որոնց պատճէնները կը մընան Ազգ. Պատրիարքարանի դիւանին մէջ. —

Ուստի Յանձնաժողովն այս ամբաստանութիւնն աճեցեալով թողուց, քանի որ այս մասին եղած վկայութիւններն հետեւեալներն են՝

1. — Նախնիքեան էֆ. — Մենք Չպլաքեան էֆ. ի հետ Օրմանեան Ս. ի տունը դնացինք նէ պրպտելու ունէ խնդիր չ'յարուցինք: Մենք առանի խնդիրը պրպտել չ'ուզեցինք:

2. — Գր. Կիւմրիցեան էֆ. — Չեմ յիշեր թէ Չպլաքեան էֆ. ինչ է խօսած Օրմանեան Ս. ի տան մէջ. կը խօսուէր թէ բանտին մէջ ոմն Գարակէօզեան այրուածքէ մեռած է:

3. Քեհեա Յովսէփ այսքան կը յիշէ թէ Օրմանեան Ս. ի հրամանաւ բժիշկ մը կանչուեցաւ դիակը գննելու. եթէ չեմ սխալիր, բժիշկ Խնճէկեանն էր գննողը:

4. Ինճեան Եւ ձեկաճիւրեան յայտնեցին թէ իրենք չեն եղած դիակը գննողը:

5. — Դիւանապետ Կարապետ Խաչատուրեան էֆ. — Արմենակ Գարակէօզեանի դիակը գննողին առթիւ կարծեմ թաղրիր մը պիտի պատրաստուէր, որուն սակայն չեմ գիտեր ինչո՞ւ մղում չ'արուեցաւ: Թաղրիր պատրաստելու հրահանգ մը արուած չէ ինձ: — Միմիայր Շահին Պատրիարքարանի մէջ ամսականաւոր պաշտօնեայ մըն էր, ինքը աղտոտ մէկն էր և աղտոտ ալ գործեր կը կատարէր: —

Հետեւաբար չ'հաստատուիր այն ամբաստանութիւնը թէ գործը հետապնդելու համար Չպլաքեան էֆ. Օրմանեան Ս. ի գիմում բրած և Օրմանեան Ս. ալ մերժած ըլլայ:

## ԺԱ.

### ԼԱ—ՀԵՅ ՔԱՇՈՒԱՏ ՀԵՌԱԳԻՐԸ

Ամբաստանողներն են՝

1. — Ղ. Չպլաքեան էֆ. նոյն ամբաստանողրով:

2. — Ա. Գասպարեան էֆ. և ձայնակիրը: — նոյն ամբաստանողրով:

3. — Գ. Պալաքեան և Ղ. Դուրեան վարդապետները և Միքայէլ քահանայ Աշճեանը: — նոյն ամբաստանողրով:

Լա—Հէյի Առաջին Միջազգային Խաղաղութեան Վեհաժողովին քաջուած հեռագրին խնդիրը, որ իր ծանրակշիռ հանգամանքին հետ հարկներէ հետէ կը զարգային չըջանալները, թէ՛ հանրային միտքը և թէ՛ ըրազրութիւնը, և որուն չուրջը առաջացած բազմաթիւ տարածայնութիւնները խոշոր համեմատութիւններ առած ըլլալով տեղի էին տուած մտքերու ծայրայեղ գերազգրութեան. — այդ խնդիրը հետեւեալն է.

Ամբաստանող Ղ. Չպլաքեան էֆ. կըսէ՝

«Կամբաստանեմ զինքը իբրեւ ազգին զէմ դաւաճան, իր Լահէյ քաջած հեռագրին համար, որուն մասին երբեք արձանագրութիւն չ'կայ Պատրիարքարանի մէջ, և որուն մասին անդեկութիւն չ'ունին Պատրիարքարանի գիււանապետներէն՝ ոչ Թէլեան և ոչ Խաչատուրեան էֆէնդի, ուրեմն այդ հեռագիրը դաւադրական գործ մըն է, կամ իր ու կատարութեան մէջ սակարկութեան գործ մը:»

Ա. Գասպարեան էֆ. և իր ձայնակիրները կամբաստանեն՝

«Լահէյի Համաժողովին մօտ իր ըրած ծանօթ աճեցիկի դիմումին համար, ինքնարեւարած թէ Ազգ. Վարչութեան որոշմամբ, պարագայ մը որ շատ մութ է, բայց անկարելւոր, քանի որ ձեռնհասութիւնը կը պատկանէր միմիայն Ազգ. Ընդհ. Ժողովոյ, եթէ գոյութիւն չ'ունէր ան, իրեն կը մնար լռել ու յայտարարել որ, ո՛չ ինք և ո՛չ ալ Ազգ. Վարչութիւնն ձեռնհաս չ'էին, եթէ երբեք ճշնշուած մը որ բանեցուցած էր այդ մասին հին բէժիմը:»

Իսկ Տ. Տ. Պալաքեան և Դուրեան վարդապետները և Միքայէլ քահանայն կը զրեն՝

«Մինչդեռ ժողովականք իր կամքին հաւատակ Լահէյի վերջին Դիւանախորհուրդին առթիւ Կայսեր ազգին դժբաղդ վիճակին մասին բողոքազիր մատուցանել կուզէին ու բողոքազիր ևս պատրաստուած էր, Օրմանեան Պատրիարք Լահէ հեռագիր կը զարնէր առանց մեր գիտութեան, յանուն ազգի խօսելով և վկայելով ժողովրդական հանգստութեան... և ոչ իսկ յետոյ տեղեկութիւն կուտար մեզ դոնէ ի գիտութիւն:»

\*\*\*

Ասոնց ի պատասխան Օրմանեան Ս. կը գրէ՝

«Կըսէ (Ա. Գ.), Լահէյ քաղաքը գումարուած Խաղաղութեան Դիւանախորհուրդին հեռագիր մը արուած լինելը աճեցիկի եղած է: — Գործի հարկաւոր և անհարկի լինելը ժամանակին պարագաներով և նկատումներով կրնար որոշուել, և ո՛չ թէ տասը տարի յետոյ պարագայից անդիտակից կերպով յայտնուած կարծիքով մը. արդէն գիտողութիւնն ալ չարք մը եթէներով կազմուած է. բան մը եղբակաջընելու համար պէտք էր հեռագրին օրինակը գիմնալ. և եթէ սխալ յայտարարութիւն մը պարունակէր, կամ եթէ վնասակար հետեւանք մը ունեցած ըլլար, զայն մասնացոյց ընել: Մինչ ընդհանրապէս սպառնալից տագնապէ մը անկախ գերմանիկալ արդիւնք է գոյացած. և Վարչութեան անդամաց հաւանութեամբ և զընտանտամբ կատարուած:»

«Կը յայտնեն, թէ Լահէյի Դիւանախորհուրդին հեռագիր արուած է, և ոչ իսկ տըրուելէ ետքը իրենց տեղեկութիւն արուած է: — Այդ կէտն ալ գրուածին հեղինակներուն(\*) ըրած յայտարարութեանց արեւեստակեալ և մտացածին լինելուն մի նոր ապացոյցն է: Որովհետեւ իրենց ժողովրդականութեան առանց այսպիսի դիպուած մը տեղի ունեցած չէ, որ տեղեկութիւն ունենային: Եթէ Լահէյի հեռագիր մը լսեր են, այն 1899ին տեղի ունեցած է, իսկ իրենք 1906ին ժողովական եղած են, և ի զուր ջանացեր են թուականներ խառնակել, հոգ իսկ չեն ունեցեր ըսածնին և ստուգել:»

(\*) Պալաքեան և Դուրեան վարդապետներուն ու Աշճեան քահանային:

Իսկ երբ Օրմանեան Ս. Յանձնաժողովին կողմէն հրաւիրուեցաւ անձամբ ներկայանալ և լուսաբանել խնդիրը, ահա՛ թէ ինչ ըսաւ այս մասին.

«Եթէ համարատուութիւն պահանջուէր, այդ մասին շատ ընդարձակօրէն կ'խօսէի, բայց եղածը ամբաստանութիւն է, թէ այդպիսի «անհարկի» հեռագիր մը ինչո՞ւ տրուեր է. ամբաստանողները պէտք է իրենք ապացուցանեն ամբաստանութեանց տակ ձգուած նիւթերուն վնասակար ըլլալը: — Հետեւաբար այդ հեռագրին ինչ ըլլալու մասին համարատուութեան մէջ կրնամ խօսիլ ընդարձակօրէն. ամբաստանողը թո՛ղ ապացուցանեն վնասը կամ փորձանքը այդ հեռագրին: —

«Դիտէ ամէն ոք և շատ լաւ կը յիշէ թէ ո՛րպիսի տագնապներու ներքեւ կապրէինք ամէնքս ալ անցեալին մէջ: — Արտասահմանի մէջ ինչ ձայն որ դուրս կուգար՝ անոր հաւանարուածը հոս-Թուրքիոյ մէջ մեր ժողովուրդը կը կրէր: — Կառավարութեանն էր մեզի հարցում կրկար, Եւրոպայի մէջ և ալլուր տեղի ունեցած անցուղարձի մասին, մենք կը ջանայինք այդ արտաքին պատճառները մեր վրայէն նետել, մեր այստեղի ժողովուրդը մասնակից ցոյց չ'տալու համար արտասահմանի ձեռնարկներուն, և նոյն իսկ հակադրուեցանք՝ այս համոզումը զօրացնելու մտօք՝ Եւրոպայի և Ամերիկայի Առաջնորդութիւններն ալ էջմիածնի տալ: — Բայց երբ Պուլկարիայէն սկսաւ շարժումը, այն ատեն կատաւարութիւնը մեր վրայ խտորէն սկսաւ ծանրանալ, կարծելով որ Պատրիարքարանի թեւադրութիւն կայ խնդրոյն մէջ. ժամանակ մը օրօրեցինք, նոյն միջոցին սկսան խուզակութիւններ ու ճնշումներ մեր ժողովուրդին վրայ, հետապնդումները խստացան: — Պուլկարիայէն պատգամաւորութիւնը գացած էր յանուն Պատրիարքարանի, մենք առանց գործին էականը ուրանալու, տեղի ունեցած ճնշումներու առաջին ատենիւ և գործին մէջէն ելնելու համար սու բերուեցաւ հեռագիր մը տուելը Դիւանախորհուրդին նախադասութեան, թէ գացողները մեր ժողովից կողմէ պաշտօն չ'ունին: Այս մասին նախապէս Վարչութեան գլխաւոր մէկ քանի անդամաց հետ խորհրդակցած եմ և հեռագրին քաջուելէն յետոյ ալ Խառն Ժողովոյ մէջ յայտնած ենք. ժողովականանք չէ թէ միայն դժգոհ չեն մնացած, այլ հնդակաւաւորն այդպիսի խնդրոյ մը մէջէն ելած ըլլալու համար գո՛հ մնացին: —

Հեռագիրը պայտա չենք յանձնած, այլ հեռագրատան միջոցաւ ուղղակի քաջած: Ո՛ր հեռագրատանն ըլլալը չեմ յիշեր հիմա: — Երբեք կանխաւ օրինակ տալու կառավարութեան չեմ զիջած. և այս հեռագրին պարունակութենէն ալ թէեւ գոհ չ'մնաց կառավարութիւնը, բայց նոյն ատեն լռութիւն ալ պահեց: Հեռագրին մէջ գոհ եմ կառավարութենէն չե՛ք ըստած, օրինակը՝ քանի որ կը պահանջէք՝ կը զրկեմ ձեզի: —

Ընդհանրապէս քաղաքական հանգամանք ունեցող խնդիրներու մասին ժողովոյ մէջ կը խօսուէր, բայց արձանագրութեան մէջ չէին գրուեր, այս հեռագրին խնդրին ալ ժողովին մէջ նկատի առնուեցաւ և արձանագրութեան մէջ չառնուեցաւ: —

«Հեռագիրը քաջուած է 1899 Մայիսի մէջ: Արդէն Դեպքանախորհուրդէն մերժուած էր եղած դիմումը, զի ես միշտ թղթակիցներու հետ տեսնուելով անդեկութիւն ունէի անցուղարձէն: — Դիմումաւ էր որ «Pro Armenia» (Բրո Արմենիա) քերքը գրեթէ ես լեցուցած եմ. հեռագրական ամսագրերու լուրերէն շատերը ես տուած եմ. ասանք կընէի լոկի մնջիկ, վախը պատած էր ամենքս, ինչպէս զիտէք: —

«Երկրորդ Դեպքանախորհուրդին երբեք չենք խառնուած, վառնդի մեր Պատրիարքարանի անունով գացող չիկար այն ատեն, այլ Կաթողիկոսը մարդ յղած էր իր կողմէն. և մենք ոչ խօսեցանք, ոչ գրեցինք այս երկրորդ անգամին: —

«Ջարմանալի է որ երկու ժողովականներ չփոխեր են Դեպքանախորհուրդին 1899ի և 1907ի երկու նիստերը, և ըսեր են թէ անդեկութիւն չունին այդ հեռագրէն: —

«Ազգին վրայ կառավարութենէն ի դորձ գրուած յայտնի ճնշումներուն, խուզարկութիւններուն առաջքը առած ըլլալու խղճի հաղարտութիւնը ունիմ. ժողովականներու գիտցուցած եմ այդ հեռագիրը. և եթէ համարատուութիւն անդի ունենար, կարելի էր աւելի մանրամասնութիւններով, օրով թուականաւ տեղեկութիւններ տալ այդ մասին»:

\*\*\*

Ասկէ յետոյ էր որ Օրմանեան Ս. Յանձնաժողովին զրկեց հեռագրին պատճէնը, որ Բերայի հեռագրատունէն ստուգուելով՝ բնագրին համապատասխան ըլլալը ճշտուեցաւ: Ա-

հաւաստի հեռագրատունէն վաւերացեալ օրինակին ընդօրինակութիւնը՝

«De Péra 4923 53 24/3 1899. 2/18 S

Honorable Présidence de la Conférence internationale de Paix, La Haye. — J'ai l'honneur de déclarer à votre Excellence que nous ne reconnaissons aucune qualité officielle aux personnes qui s'adressent d'après les journaux à la Conférence au nom de la nation arménienne et que méconnaissions ces démarches.

Le Patriarche des Arméniens de Turquie, Malachia

(Déposé au bureau de Péra, le 12/24 Mai 1899)

Հոս կը գնենք իրեն՝ թարգմանութիւնը ևս, որ հետեւեալն է՝

«Պատուարժան Գահերէց Խաղաղութեան Միջազգային Դեպքանախորհուրդի ի Լահէյ:

«Պատիւ ունիմ յայտարարելու ձեր Վերսեմութեան, թէ մենք բնաւ պաշտօնական կերպարան մը չենք ճանչնար այն անձանց վերայ, որոնք, լրագրիներու գրածին համեմատ, Դեպքանախորհուրդի կը գիմեն Հայ ազգի անունով, և չենք ճանչնար այդ դիմումը: —

Պատրիարք Հայոց Թուրքիոյ, ՄԱՂԱՔԻՍ: —  
(Յանձնուած Բերայի հեռագրատան, 12/24 Մայիս 1899, երեկոյեան ժամը 2,18ին):

\*\*\*

Յանձնաժողովին արդէն ծանօթ ըլլալով խնդրին իսկութիւնը՝ քանի որ ամբաստանող ու ամբաստանեալ կողմերը լսած և բուն իսկ հեռագրին օրինակը ձեռք բերած էր. — կը մնար լսել Օրմանեան Ս. ի ցոյց տուած Աստուեան, Կիւլպէնկեան և Նորատունկեան էֆ. հետեւ լրագրողութիւնները, թէ արդարեւ կանխաւ իրենց յայտնի էր հեռագրին բովանդակութիւնը և թէ իրենց կանխահաճ համաձայնութեամբ զարնուած էր այն, որուն համար ալ, իբրեւ թէ, իրենց գոհունակութիւնն են յայտնած եղեր: Յոյց տուած չարորդ վկան՝ Ս. Տէմիրձիպաշեան՝ մեռած է:

Ասանցմէ Գաբր. Նորատունկեան էֆ. իրեն կրկնակի գիմումին ի պատասխան մեզ գրեց հետեւեալ նամակը.

«Օրմանեան Ս. ի կողմէ Լահէյի Դեպքանախորհուրդին քաջուած հեռագրի մը խնդրոյն լուսարձանութեանն համար վախճաք յայտնած էք լսել իմ վկայութիւնն ևս: Ըստ ինքեան հեռագիրը կարեւորութիւնէ դուրս լինելով՝ առկէ տալ իմաց տուած էի Պատ. Յանձնաժողովոյց որ վկայածս կը հաղորդեմ Ազգային ժողովոյ նիստի մէջ, եթէ պէտք տեսնուի ու չունիմ նոր ինչ յաւելցնել առ այդ:»

Աստուեան էֆ. յատենի ժողովոյս յայտնեց թէ՝

«Լահէյի հեռագրին համար Օրմանեան Ս. ի հետ ես որ եւ է խորհրդակցութիւն ունեցած չեմ: Բայց ի լրացում եմ թէ Պալատէն սպառնալիքներ եղած են և ըստ անո՛ւ արուեր է հեռագիրը»:

Իսկ Պատրիկ էֆ. Կիւլպէնկեան մեր պաշտօնագրին ի պատասխան հետեւեալը գրեց մեզ Լոնտոնէն. —

«Լահէյի հեռագրի մասին Օրմանեան Ս. անձնապէս իմ կարծիքս տուած չէ. միայն որքան որ կը յիշեմ Սանատարեան ժողովքի մը մէջ անցողարար խօսեցաւ. այս ալ հեռագրէն առաջ կամ վերջը լինելի կարելի է ստուղել հեռագրին թուականին բաղդատելով յիշեալ ժողովքին թուականին հետ 1-2 օր տարբերութեամբ, վառնդի նոյն ժողովքին նկատելն տեսնելի կունենային երբ պէտքն զգացուէր: —

«Ժամանակ անցած լինելուն, աւելի որոշ տեղեկութիւն տալ չի կարելնալուս կը ցուլեմ»:

Կամենալով նոյնիսկ «պաշտօնագրին» իրեն կարծիքն առնել այս նկատմամբ և ճշգրիտ գաղափար մը կազմել եղբարեկան մասին, Յանձնաժողովս անկընդհատ Միստա էֆ. Չերապը, որ յատենի ժողովին յայտնեց թէ՝

«Լահէյի վեհաժողովին զիմելուն նպատակէն էր Պերլինի դաշնագրին 61րդ յօդուածին համաձայն խնդրել Տաճկահայոց կեանքի, դպրի և պատուի ապահովութիւն: Պորտէն վատանելի ազդրութ մը ինձ իմաց արուած էր թէ Թուրքիան փաշան յաջողի է խօսք առնել նախադահէն, որ Հայոց խնդիրը արձանագրութեան ալ չանցնի»:

Չերապ էֆ. ի բացատրութիւններէն է ներկայացուցած փաստաթղթերէն երեւցաւ որ Յանձնաժողովին ձեռք բերած թիւերն ու անդեկութիւնները ճշգրիտ են, այն է՝ Չերապ էֆ. իր առաջին գիմումն բրած է վեհաժողովի նախագահութեան 1899 Մայիս 18ին դրաւոր կերպով, որուն պատասխանը չ'ստանալով Մայիս 22ին կերթայ նախագահ տեսնելու, «2 օր վերջը քող գայ» կը պատասխանուի, բայց այն օրը 24ին բացարձակապէս կը մերժէ ընդունիլ զինքը: —

Այնուհետեւ Չերապ էֆ. կրկին նամակ կը գրէ և Մայիս 27ին կատանայ, գրաւոր, մերժողական սա պատասխանը:

«Conférence de la Paix

La Haye, Le 27 mai 1899

Monsieur.

D'après les ordres de son Excellence M. le Président de la Conférence de la Paix, qui a bien reçu Votre lettre du 24 mai dernier, j'ai l'honneur de Vous informer que, toute question politique étant exclue des délibérations de la Conférence, aucune réponse ne peut vous être donnée pour la mission dont vous prétendez être chargée par les Colonies Arméniennes en Bulgarie, en Egypte et ailleurs.

Veuillez agréer, Monsieur l'assurance de ma considération la plus distinguée.

I. Van Eys

Secrétaire-général de la Conférence de la Paix.

Չերապ էֆ. յարեց թէ ինքը կանխաւ, Սնդիկայէն զեռ ճամբայ չեղած, զիտէր որ վեհաժողովը այլ և այլ հաստատութեանց խնդիրներով պիտի չզբաղի, բայց զխնայով հանդերձ գնացեր է:

Հարկ եղաւ դիմել պատմութեան և անձ թէ ինչ կարելի եղաւ քաղել պատմութենէն:

\*\*\*

Martens ամբողջ հատոր մը նուիրած է 1899ի Լահէյի խաղաղութեան Միջազգային վեհաժողովին (\*):

1899ի վեհաժողովին պաշտօնը, ըստ Martensի, կանխապէս դժուած և որոշուած էր Ռուսաց արտաքին գործոց նախարար Կոմս Մուրավիեվի 1898 Դեկտեմբեր 30 թուակիր չըջարեւոյնում և անբութեանց կողմանէ համաձայնութիւն գոյացած էր այդ առթիւ. այնպէս որ վեհաժողովը չէր կրնար որոշեալ ծրարներ զուրս ու է ինքրով զրաղիլ:

1899 Մայիս 18ին տեղի կունենայ վեհաժողովին առաջին նիստը: Բացման ճառին մէջ Կոմս Մուրավիեվ կրկին կը հաստատէ նախորոշ ծրարներ:

Երկրորդ նիստը տեղի կունենայ Մայիս 20ին: Այս նիստին մէջ վեհաժողովը դարձեալ կորոշէ որ ինք ձեռնհաս չէ ժողովին համար գծուած չըջանակէն դուրս օրէէ ուրիշ խնդրով

(\*) Recueil général, II serie, Tome XXVI:

զբաղվել: Այս նիստին մէջ է, որ կորույտի՝ ժողովը դռնիակ բլլալով հանդերձ՝ Դիւանի հարկ տեսած տեղեկութիւններն հաղորդել մասնակցին և հետադարձան գործակալութեանց:

Մայիս 23ին կը գումարուի երրորդ նիստը և այնուհետև ամիս մը, մինչև Յունիս 20, նիստ տեղի չունենար:

Չերազ էֆ.ի գիմումին ու մերժուելուն մասին ու և է յիշատակութիւն չ'կայ ատենադրութեանց մէջ:

Մայիս 14ին, երբ Վեհաժողովին նիստերն ընդհատուած էին արդէն, Չերազ էֆ. իր երկրորդ գիմումին ժխտական պատասխան կատանայ: Նոյն օրը երեկոյան ժամը 2,18ին Բերազէն հեռագիրը կը զարնէ Օրմանեան Արքային:

\*\*\*

Յանձնաժողովս այս բոլորն աչքի առաջ ունենալով և նկատելով՝

Որ ինչքան ալ Լաճէյի խաղաղութեան Միջազգային Վեհաժողովը արամաղիր չլլար զբաղել զինքը բաղկացնող պետութիւններուն ներքին խնդիրներով,

Որ ինչքան ալ այդ ժողովին ըլլուելիք գիմում մը զատապարտուած ըլլար անուշադրութեան, այնուամենայնիւ Տաճկահայ ժողովուրդը 1899ի իր օրհասական վիճակին մէջ, երբ անոր պատմա-անհատական գոյութիւնը վառագիւն ինքնակալ ըլլալով՝ նա յուսահատական ճիգեր կընէր ու և է կերպով կեանքի, գոյքի և պատուի ապահովութիւն մը ձեռք բերելու համար, ինչ որ Չերազ էֆ.ի պատգամաւորութեան նպատակը կը կազմէր:

Որ այլուիսի գիմում մը գոտեղնորչ և սիրտարար ազդեցութիւն ունենալով Տաճկահայոց հոգեկան արամադրութեան վրայ, զայն չեղորացնելու բնոյթ ունեցող հեռագիր մը քաշուիլը Օրմանեան Ս.ի կողմանէ՝ Յանձնաժողովս ձայներու մեծամասնութեամբ յանձնադրէ, ըլլայ մինչև իսկ գիմումին մերժուելէն յետոյ և գիտնալով հանդերձ թէ իր հեռագիրը ու և է կշիռ պիտի չունենայ. մանաւանդ որ այդ հեռագիրը քաշուած է ատենց Վարչութեան կանխահաճ հաւանութեան, քանի որ այս մասին Օրմանեան Ս.ի ցուցմանքները չը հաստատուեցան, համաձայն Մ. Ասատեան և Պ. Կիւրպչեանի էֆ.ներու գրաւոր և բերանացի լուսարարութեանց:

Եւ սակայն, միւս կողմանէ նկատելով՝

Որ բոլորովին անհիմն է այն ամբաստանութիւնը թէ Օրմանեան Ս. «գոհունակութեամբ»

թիւն» յայտնած է իւր հեռագիրին մէջ հանդէպ Համիտեան բռնակալութեան,

Որ սխալ է նոյնպէս կառավարութեան «հորհակալութիւն» յայտնած ըլլալը, ինչպէս կերեւի հեռագրին բովանդակութենէն,

Որ կառավարութեան նախորդ բէժիմին մէջ, նմանօրինակ պարագաներու տակ, անմեղ ու ծայր ստախճան տոտապիւր Հայ ժողովուրդին վրայ դժոխային հարստահարութեանց, ճշդամբերու և բնաջնջման մեթոտներու կիրառման սպառնալիքներ ի գործ կը դրուէին Ազգ. Պատրիարքարանի վրայ՝ հարկադրելու համար զայն որ կառավարութեան ցանկացած եղանակով հեռագրուի, ուղղուած տեղը,

Որ ըստ այսմ անխուսափելիօրէն սղաւնայից ու վտանգաւոր դիրքի մը մէջ պիտի գտնուէր Տաճկահայութիւնը՝ չ'հեռագրելը բռնակալ Համիտի կողմէ հակապետական քայքայ մը նիստուկելով ու մինչև իսկ գուցէ նորանոր ժողովրդական աղէտներու առթիւ տալով՝

Որ Ազգ-իւլ Համիտ, օտարիկ կապաժոտ ընտրութեան ու խառնուրդին բերմամբ, որքան ալ հաւատարմութիւն արուէին թէ Վեհաժողովը Հայկական հարցով չ'պիտի զբաղէր՝ նորէն տաղ-նապի մէջ էր, աչքի առաջ ունենալով այն պարագան, որ «Հայոց պատգամաւորը» քաջուած էր ու և է կերպով մոռնել Վեհաժողով և իր բողոքադիրը ներկայացնել,

Որ այս պայմաններուն ներքե քաշուած այդ հեռագիրը՝ թերեւս Համիտին կապաժոտները փարատելով և Տաճկահայութիւնը նորանոր ճշդամբերու չ'ենթարկելու մտքով չէր կրնար պատճառ եղած ըլլալ պատգամաւորութեան մերժուելուն կամ անոր նպատակին անյաջողութեան. —

Այս բոլոր նկատումներուն հիման վրայ Յանձնաժողովս Օրմանեան Ս.ի սոյն յանձնադրէր զայսպէս արտաբան առարկայ չ'ընդունելով ճշդութի կը համարէ, ձայներու մեծամասնութեամբ:

\*\*\*

Յանձնաժողովս, այս առթիւ, ուշադրութեամբ առաւ ուրիշ պարագայ մը ևս, այն է՝ վերջին Վեհաժողովին նկատմամբ բռնաճնդները, որ հեռակալներն են՝

Ամբաստանող Տ. Տ. Պարպեան և Դուրեան Վ. հերը ու Ս. Ս. Զեհան քահանայ իրենց ամբաստանադրի Ե. հաւատածին մէջ կըսեն.

«Մինչդեռ ժողովականք իր (Օրմանեան Ս.ի) կամքին հակառակ Լաճէյի վերջին Դեա-

ԺԲ.

## ԿԱՐԱՊԵՏ ՏԵՐՈՒՆԵԱՆԻ ԵՒ ԿՆՈՉ ԱՄՈՒՄՆԱԼՈՒԹՄԱՆ ԽՆԴԻՐ

Ամբաստանողն է Օրմանեան Ս. Տերունեան, որ կըսէ՝

«Եղբորս Կարապետ Տերունեանի կնոջ՝ տիկին Ազաւնիի մահուընէն յետոյ, իւր եղբայրը Նշան էֆ. Գաղաղեան՝ ուղղելով եղբայրը գրիել ժառանգութեան իրաւունքէն, կը գրիմէ Օրմանեան Պատրիարքին՝ որ Շէյխ-իւլ-Իզամի Դրան յայտարարութիւն բնէ թէ տիկին Ազաւնի ամուսնալուծուած ըլլալով, եղբայրս իրաւունք չ'ունենայ ժառանգութեանէն:

«Բայց որովհետեւ Պատրիարքարանի մէջ չկար առ այս ո՛ր և է արձանագրութիւն, և եղբայրս և իւր կինը ժառանգակն ո՛ր և է գանդատադիր մը տուած չէին իրարու դէմ, Օրմանեան Պատրիարքն իւր սովորական ամենատակաւի գէնքին՝ զրպարտութեան և սրտութեան կը գրիմէ Շէյխ-իւլ-Իզամի Դրան, ահաբեկող թաղրիրով մը, որով կը յայտարարէ թէ եղբայրս և իւր կինը ամուսնալուծուած են: — Այն թաղրիրէն կը հասկցուի որ՝ եղբայրս փախստական մը եղած է ժընէվ, և հոն գտաւ իր խմբակներու գործակից, մինչդեռ եղբորս Պրիւքէյ հաստատուած և իւր գործերով զբաղիլը Օրմանեան Պատրիարք շատ բաւ գիտէր, և ես ինքս անարգ լրատու և տեղեկաբեր Էվզաֆի Դրան ուր ուրք անդամ կոխած չէի:

«Այս թաղրիրը արուած թուականէն, այսինքն եղբորս կինը տիկին Ազաւնիի մահուընէն վեց ամիս յետոյ Օրմանեան Պատրիարք կը գրիմէ հոգեւոյս Ս. Կաթողիկոսին և որուն բարեմտութեան օգտուելով կը քաջողի ամուսնալուծման վճռողի բերել տալ, որպէս և հրատարակուեցաւ Էջմիածնայ «Արարտ» պաշտօնաթիւրին մէջ, և արտատպուած տեղական թերթներուն մէջ: Թէեւ եղբայրս Օրմանեան Պատրիարքին բերած այս ապօրէն վճռադրոյն գէմ կը բողոքէ հոգեւոյս Ս. Կաթողիկոսին, բայց իւր գիմումներն սպարդիւն կը ցնան, և ես ինքս քանիցս Կրօն. ժողովոյ Ս. Աստեապետին և ուրիշ ժողովականներուն կը գրիմեմ, այլ միշտ պատասխան կընդունել թէ այս որոշումն իրենց գիտակցութեամբ և գործակցութեամբ եղած չէ:

պաճախորհուրդին առթիւ Կայսեր ազգին զմարզդ վիճակին մասին բողոքադիր մատուցանել կուզէին ու բողոքադիրն ևս պատրաստուած էր, Օրմանեան Պատրիարք Լաճէ հեռագիր կը զարնէր ատենց մեր գիտութեան, յանուն ազգի խօսելով և վկայելով ժողովրդեան հանգստութեան... Եւ ոչ իսկ յետոյ տեղեկութիւն կուտար մեզ գտնէ ի գիտութիւն:»

Այն ինչ յայտնի է թէ վերջին Վեհաժողովին, որ 1907ին գումարուած է, բնաւ հեռագիր զարնուած չէ:

Իսկ Գրիգորի Վ. Պարպեան, որ 1906-08 Վարչութեան կանգամակցէր և որ մին էր և բերք ամբաստանող ժողովականներէն, կը պընդէ թէ՝

«Լաճէյի Դեապախորհրդին խնդրոյն մէջ Ազգ. Կեդրոնական Վարչութիւնը ոչ միայն ճնշողակալութեան հեռագիր տալու կողմնակից չէր, հապա ընդհակառակը՝ մեք Կայսեր կան Պալատ բողոքադիր մը մատուցանելու կողմն էինք և նոյն իսկ բողոքադիրն ալ խմբադրեցինք ու երկար բարակ տանել բերելէն վերջը խնդիրը առկա մնաց:

«Վերջը եւրոպական լրագիրներէ իմացանք թէ Օրմանեան Ս. հորհակալութեան հեռագիր է տուած Լաճէյի Վեհաժողովին»:

Իրեւ թէ 1907ին հեռագրի խնդիր դոյուունենար և Պարպեան վրդ. ալ ընդդիմադիր ուղղութեան պատկանէր, ինչ որ իրողութեան ամենախորք նշոյն իսկ չ'կրէր իր մէջ, քանի որ Լաճէյի հեռագիրը քաշուած է անիւ 9 տարի տաջ, և այն ատեն Տ. Գրիգորիսը տակաւին վարդապետ ալ չէր և ոչ իսկ անդամ Ազգ. Կեդր. Վարչութեան: Ու հետեւաբար չէր ալ կրնար մասնակցած ըլլալ այն ատենու խնդրի մը քննութիւններուն...

Նոյն սխալը կը գործէ նաեւ Արխատկէն էֆ. Գառապարեան երբ իր բացատրութեանց մէջ կըսէ՝

«Ի տէր հանգուցեալ Կաթողիկոսին կողմէն Լահիի Վեհաժողովին եղած դիմումը կը վերաբերէր ազգի կրած հալածանքներու բարձման և բարեկարգման ներմուծման:

«Օրմանեան Ս. կը չեղորացնէր Ս. Հայրապետին դիմումին ազգային և պաշտօնական հանգամանքը և կը ժխտէր անոր պէտքը:

«Ինչպէս կը անհունի, Օրմանեան Պատ-  
րիարք հոգեւոյս Կաթողիկոսին իւր վրայ ու-  
նեցած անասման վտանգութիւնը չարաչար  
զործածելով, և իւր անհատական սուտ և  
զրպարախ գրութիւններով խաբած է հոգեւոյս  
Ս. Կաթողիկոսը և յաջողած է յետ մահու տ-  
մուսնադաման վճիռ ձեռք անցընել, շահագոր-  
ծելով Ս. ամուսնութեան օրէնքները:

«Անա՛ Պատրիարք մը որ ի ներկայութեան  
Աստուծոյ և Ազգ. Երեսի. Ժողովոյ և Ժո-  
ղովրդեան աւիտած է հաւատարիմ մնալ Ազգ.  
Սահմանադրութեան և Տէրութեան, կը զրժէ  
այս աւխտը, առանց Վարչութեան սրտումն  
առնելու ամուսնիս կրնէ Ս. ամուսնութեան  
ամենանուիրական կարգն ու կանոնը, կը մո-  
լորեցնէ տէրութիւնը և կը թերադէ զայն որ  
ամբողջ զերգատան մը տրին արցունքով  
լան, և եղբօրս ազնտալի և կանխահա մահ-  
ուան սրտածառ կը լինի:

«Հետեւաբար կամբատանեմ Օրմանեան  
Պատրիարքը իրր զրպարախ և զաւանան, բմ-  
բոսա և եղծանող Հայաստանեայց Ս. Եկե-  
ղեցւոյ նուիրական օրինաց»:

Սոյն ամբատանութեան իրր շարժառիթ  
և զրդապատճառ Տէրութեան էֆ. ցոյց կուտայ՝

«Եղբօրս օրինական ժառանգութեանէն  
յանիրաւի զրկուելու պտոճառ եղաւ Օրման-  
եան Ս. երկու գիտումներով, այն է՝

«Ա. — Բարթող էֆ. Թէլեան հակակիր  
էր եղբօրս և կուգէր վրէժ լուծել և միանգամ  
զայն այգպիսով հաճելի բլղալ Նշան էֆ. Գա-  
ղաղանի:

«Բ. — Օրմանեան Ս. ազնց այգպիսով  
Նշան էֆ. Գաղաղանէն հինգ—ստոր հազար  
ոսկի փրցնել յօդուա Ազգին»:

\*\*\*

Ասանց ի պատասխան, Օրմանեան Ս. կը  
զրէ՝

«Տիկին Աղանի Գաղաղանի ամուսնա-  
լուծումը՝ մահուրէն վեց ամիս ետքը արուած  
որոշում չէր. այլ կանուխէն երջանկայիշատակ  
Հայրապետին կողմէ արուած որոշում մըն է,  
հիմնուելով իւր իսկ անձնապէս ունեցած տե-  
ղեկութեանց և անուղղակի իրեն եղած դի-  
մումներուն վրայ, որով ամուսնութիւնը լուծ-  
ուած, և Աղանի՝ պաշտօնապէս Տիկին Գա-  
ղաղանի ճանչցուած, և ըստ այնմ ալ ի կեանս  
և ի մահուան և ի թաղման հաշակուած էր:  
Երջանկայիշատակ Հայրապետին վերջին յայ-

տարբութիւնը պարզապէս կրկնում և հաւ-  
տատութիւն էր արդէն կայացած նախկին  
վճռոյն, ինչպէս պաշտօնապէս և յայնապէս  
չհշտուած է:

«Շէյխ-Իւլ-Իսլամի Դրան ամուսնուած գը-  
րութիւնը, ո՛չ անձնական գործ էր և ո՛չ  
զաղանի տեղեկատուութիւն, այլ պաշտօնա-  
կան և գիւսնական գրութիւն, ի պատա-  
խով պաշտօնական առաջարկին, հիմնուելով  
այն տեղեկութեանց և այն ծանօթութեանց  
վրայ, զորս Պատրիարքարանն ունէր կամ ստա-  
ցած էր արժանահաւատ ազգիւրներէ, ինչպէս  
որ ամէն պաշտօնական և գիւսնական գրու-  
թիւնը կը կողմնէ: Ըստ այնմ, պաշտօնա-  
ղիրը՝ Պատրիարքին անձնական հեղինակու-  
թեան վերադրելու կամ գիտումնաւոր նախ-  
առի ենթադրելու բնաւ տեղի չի մնար:

«Ամէն սովի մէջ, հանդուցեալ Կարա-  
պետ Տէրութեան և իւրայինք, աստիկն բարձ-  
րագոյն ամուսնութեան գիմնային, իրենց դատը  
պաշտպանելու համար, ամուսնական խնդրոյն  
համար Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, և  
ժառանգական խնդրոյն համար Շէյխ-Իւլ-Իս-  
լամի Դրան, և եթէ Պատրիարքարանի գործը  
սխալ բլղար, զայն ուղղելու և փոփոխելու  
համար պէտք եղած միջոցները գործածելին,  
և վերջապէս իրաւախոս հաշտութեամբ և փո-  
խադարձ համաձայնութեամբ զործերնին փա-  
կեցին, և Պատրիարքարանի վրայ պատառ-  
խանաւորութիւն չ'մնաց»:

Իսկ բերանացի ցուցմունքներուն մէջ Օր-  
մանեան Ս. կըսէ՝

«Ամուսնալուծման համար Ս. Հայրապե-  
տը կանգակ զրկած էր. ուրիշ կերպաց Հայ-  
րապետի լիակատար ծանօթութիւնը Աղանի  
ամուսնական խնդրոյն պարապանքուն նկատ-  
մամբ. մենք աշխատած չենք որ ասանկ կոն-  
գակ մը բերէինք Հայրապետէն: Դիտել որ  
Ներսէս եպիսկ Աղանեան մօտէն ծանօթ էր  
Գաղաղանիներուն, անանց մարդն էր. անոր  
ձեռքով եղած էր: Մենք կանգակ բերելու աշ-  
խատած չենք: Իսկ թաղերի մէջի բառերուն  
վրայ տարբեր իմաստով մը ծանրանալու հարկ  
չ'իկայ. երբէք միտքէս չեմ անցուցած Տէրութե-  
անի յեղափոխական բլղալը, ամբողջ թաղեր-  
ին պարտականութեանը մէջ բօլթիք չ'կայ:  
Շէյխ-Իւլ-Իսլամին Դրանէն եկած հարցումին պա-  
տասխան մ'է տուածին. և չհշտուած պար-  
բերութիւնը միմայն անաբժան, անառակ

կեանք մը ապրող իմաստն կը ցուցնէ. եթէ  
բառերուն այժմն վրայ ծանրանալ կուգէր,  
բառերը ինծի մի՞ վերադրէր, զորով ես չեմ.  
Ես իմաստը միտքս տուած եմ, մարդը հաւ ալ  
չէր, իմացած էինք որ անառակութեամբ ապ-  
րող մ'էր, միտքէս անցած չեմ անցուցած  
յեղափոխական բլղալը»:

\*\*\*

Ազգ. Պատրիարքարանի աստեղագրու-  
թիւնները և այս խնդրին վերաբերող պաշ-  
տօնագրերը պրպակու ժամանակ Յանձնաժո-  
ղովս լուրջ ուշադրութեան տուա հետեւեալ  
կերպ գրութիւնները, զորս լրիւ կը ներկայա-  
ցնենք նաեւ Պատի. Ժողովից ալ նկատաւման:

Ա. — Օրմանեան Ս. ի կողմանէ Շէյխ-  
Իւլ-Իսլամութեան Դրան ամուսնուած է սա  
թաղերով՝

«Սաղիմէի խառատի Շահանէ վէ Մալիյէ  
նաղբըր Էսպաղը՝ միւթէվէֆա Յակոբ փաշանին  
հէմլիքէսի Գաղաղեան Աղանի հանրմըն պիւր  
վէլէտ վէֆաթը վուգու. պուլմաթը իլէ վէրա-  
սէթի լիւսէվէյն էր գարընտալը՝ ճէմլիքթը  
բուսումիյէ աղաւթնաւան սատաթթու Նշան  
Էֆէնալիյէ միւսնասորը պուլմաթը վէ տիկէր  
վարիսի պուլմաթմը իքէն միւթէվէֆաթը  
միւսմալիյէնալին տիար Էմէպիլէտէ Տէրութե-  
ան Կարապետ նամընտալ զէվճի պուլմաթը-  
ղընը մէրգում Կարապետին պիւրատէրի Օննիկ  
Էֆէնալի Էվգաֆը հիւսնային Պէյթիւլմաթ միւ-  
սիւրլիւսիլին միւսնասաթթա իկապար իթմիլ վէ  
թէրէքէսիլին թահրիբի զմնընտալ թէմլիքին  
թալէպ Էյլէմիլ օրմաւընտալ, թէրէքէսիլին  
թահրիբին պէտ ու միւսպաշէթթ օրմաւաղը  
միւսմալիյէթը միւսմալիյէնալ թարաֆընտալ պա՛  
թահրիբ միւսմալիյէն Նշան Էֆէնալիյէ իկթար  
օրմաւալ իսէտէ հէմլիքէսիլին մէրգում Կա-  
րապետի օլան զէվճիլէթ ալապաղընը ծնիքի  
սէնէտէն պէրու թէմաթը իլէ միւսպիթի օլ-  
մալ վէ տէրպարը Շէվքէթ գարարը Ալիան  
Աղարանին ձինէլիւրա չէնիլէ սալաւալ  
Էլան օրմաւալ իկաթթ իթմէթալ պուլմաթալ  
օրորղընը վէ միւթէվէֆաթը միւսմալիյէնալին  
մէրգում Կարապետին թահթը նիքեհնտալ  
վէֆաթ իսուալ իթմէթիլին թաթրիլիանէ-  
տէն իսթիլամ օրմաւալ իճապ իսէնէկինի  
միւսմալիյէն Նշան Էֆէնալի թահրիբէն վէ ճէ-  
վապէն պէտան իթմիլ օրորղընալ պիւրալէն վէ

թաթրիլիանէն իսթիլապթը մէզէպիլիյէսի-  
նին մահթուլիլիլին թէլիտէն վէ մէջիար  
մախսուա վիւքէլանին թէլիտիլիլի պիլիթի-  
զան չէրէֆաթարը օլան իրատէի Սէնիլիլի հալ-  
րէթը թաթիլանի մանթուլը ալիսնէ թէվֆը-  
քէն իթթիլապ պուլմաթալ Մալիլի վէ մէ-  
զահալ նէգաթթը ճէլիլիլին սէլիլը շարան  
308 վէ 27 Մարտ 307 թարիլի վէ 8 բաղաթը  
թէգէթէլի ալիլիլի իլէ թաթրիլիանէն թէպ-  
լիլ պուլմաթմը օլան մուգաթթէթաթթըն պիլ  
ֆըրրաթը տաթիլ «մէհաթթիլ չէրիլիլի բալէթ  
օլման վէրատէթ տաթիլարընտալ Էրպալը  
միւստըն թաթրիլիանէտէն իսթիլաթը միլ էլ  
գաթթալ ճարի օլան ուսուլէն պուլմաթը  
կիլիլի պատէլին տաթիլ պուլ ուսուլէ թիլիլի  
օլմանալ» մատաթիլ պուլմաթընտալ իսթիլ-  
նալին օլիլիլիլի միւսմալիլիլի միւսմալիլիլիլի  
լէարը իւլէրիլիլի մուֆաթթաթթ վապը օլապ  
օլմաթընըն իսթիլաթ վէ իսթիլիլիլիլիլի  
ապիլի Էվգաֆը Հիւսնային նէգաթթը ճէլիլիլի-  
սիլիլիլի թաթրիլիանէն թաթիլիլի պուլմաթը-  
մը օլան թէպթէլի ալիլիլի ճէվապէն թա-  
րաֆը տաթիլիլիլի կաղըրան թաթրիլիլի  
մուսմալիլիլի Նշան Էֆէնալի թարաֆընտալ պէ-  
յան օրման մուֆաթթաթթըն հաղթաթթէն վու-  
գու պուլաթը վէ միւթէվէֆաթը միւսմալիլիլի  
միւթէվէթիլիլի հաթթ վէֆաթ իթմիլ օլաթը  
պէյան վէ իննա օլմանը օրորղընտալ, մու-  
ճիլը թահրիլ թէրէքէսի պուլմաթաթը  
թէպիլիլի իթմիլ իքէն պուլ քէրթ բուսէլի  
Գաղաղեալիլիլի զրաթթը Սակէրիլի մահթէսի  
թարաֆընտալ մուսմալիլիլի Նշան Էֆէնալիլի 4  
բէպիլաթթը 321 թարիլիլի պիլ իսթիլաթա-  
մէ իրապ վէ թէպիլ օլմաթաթ մէրգում  
մէ իրապ վէ թէպիլ Սէֆէրեան Կարապետին  
Կարապետին վէրիլի Սէֆէրեան Կարապետին  
թալէպ իւլէրիլիլի թէրէքէսիլի թահրիլիլի  
մուսպաթթէթ օրմաթը վէ մուսմաթաթթ իսթիլ-  
մէթիլի թալաթթալ զաթթիլիլիլի միւսպաթթէ  
վէրիլիլիլի պիլաթթիլիլի վէ հաթթիլ մուսմաթի-  
լիլի Նշան Էֆէնալիլիլի Կաթիլաթթա Սալիլ փա-  
լա իսթիլաթա իսթիլաթ իթմիլ վէ քէնտալիլիլի  
այիլա պաթը Էվրապ վէ տէֆիլիլիլիլի տէրու-  
նիլալ հիլիլ Էյլէմէթալ պուլմաթը օլաթը  
օտա թէմիլ իսթիլիլի տիլ: Գաղաղեալիլիլի  
միւսպաթթիլիլի պուլ տուրէթիլ միւսնասաթթ վէ  
հաթթիլ Գըսմէթ Սակէրի մահթէսիլիլի իլ-  
ֆաթը գաթթալ ճիւրթ իսթիլիլիլի մալաթաթը  
Չաթթը Շէվքէթթաթթը հաղթէթը Բաթիլանիլիլի  
վէ միւթը ու տէֆիլիլիլի իֆաթի հիւսնը իսթ-  
մէթ իսթապ վէ մէկսէր տաթաթաթ իթմիլ

օլան միւթէվէֆա Յակոբ բաշանըն ախլէսի էֆրատընը թանգիր վէ ըզրար իթմէր վէ էճ-նէսի մէմալիքինտէ պուլունուպ քիմ պիլուր նէ իշլէրէ իշթիկալ իթմէքաթ պուլունուպ պիր տաթմէ ֆուլուպի օլարադ ազճէ դադանարը-մադ խուսուսարընտան իսլարէթ պուլունուպը անդալըմադաւ արը: Մանքէմէի չէրիլէնէ միւ-րաճաթիլէ պու. և օրտա խտտա վէ թալէսլէրէ ճէվալէի սէմ ու իթիպար իսլիլիկի եանի ազար նիքեան վէ ֆէսիսը նիքեան մատտէ-լէրինտէն վէ պուլուն միւթէֆէրի խուսուսաթ-տան օլարադ թէքէվիլէն խտն միւնադաւա-թին միւթի ֆապ ու բուլէթի բաթիլիլանտէ օլարադ թանընմադը թապիրաթ բաթիլի-լիք հուգուպ վէ վաղիֆէի բուհանիէսի վէ անը իթիլիլիլանտէ էսա վէ մէպուսի իւզէրինտէ միւթէսի օլարադ պալէպարը հաթիլիլ Կիւ-մալիլիլարէ միւթէլէն պէրաթը Ալիլէ իլէ վէ անիլիլէն պա իրաւէի Սէնիլէի հաղրէթը բաթիլանտէ իթիլիլիլադ պուլարըլան մազար-րէրաթիլ թաթիլք վէ թէմին պուլարըլմը օլան իթիլիլադ թէ մէզնէսլիլէի իսլալէ պիր չըզըր աչըրաճաղը մէրնու պուլունմը արը իմթիլադ թէ միւնադաւ թէ մէզնէսլիլէն միւնաթիլէ վուգուլի մէթպու միւֆաթիսա-մըմը համիլ ճէլիլ մազադմըմը Բաթիլա-նըմը էֆէնաթիլ հաղրէթիլիլին բիզայի մէ-նամին իթիլիլաթ շաննէլէրինտէ քիւլիլէն իս-լաֆիլիլադ պուլունուպը կիլիլ, նէզար Ալիլի հաղրէթը Մէլէլիլէթիլիլանտէ սարա թէճ-վիլ պուլարաւադադը պիլ իշթիլիլաթ պու-լունուպը միւթէվէֆաթը միւնաթիլէն Ազաւ-նի հանըմըն մէրպու Տէրունտան Կարապետ իլէ օլան նիքեանը պաղը էսպապա մէպիլ վա-զիֆէտար վէ մէրճիլ օլան մազամը բուհանի-տէն սարտէմճէ ֆէսիս վէ իլլա իսլիլիլ վէ պուլար միլիլանտա զէվիլիլէթ միւնաթիլաթ թէ պէտադար թէմամը իլէ զաթէն միւնաթիլ օլմը վէ մէյանտա մուճիլը թանըր թէքէթ պուլունմամը վէ պիլապէն ալէյ մէզքիլ օտա մէօրիլիլին հէման ֆէքթի միւլթապի պուլուն-մաչ օլարըլըն իւթիլիլէն Ասկէրի գաւաթը-զընա էմը ու իշար պուլարըլմար իսթիլաթը իլէ արըլը հաթ միւլաթաթիլ զըլընար օլ պապաթ »:

«6 բէպիլ ախլը 321 վէ 19 էյուլ 319».

Էտաթի  
Էրմէնի Բաթիլիլաթի

\*\*\*

Բ. — Հոգեւոյ իրման Կաթողիկոսին ուղղութեամբ՝ Օրմանեան Ս. ի թիւ 1558 և 1903 Յունուար 1 թուակիր գրութիւնը, որ ահա. —

«Վեհափառ Ս. Հայրապետ,

Յաւելի Տէր ի Ձեզ աւուրս երկարա և բարեբաւարիս:

Ենա սպաքէն յականձն Աստուածաբաւ Սրբազնութեանդ տարածաւ և ողբալի վախ-ճան կենաց բարեյիշատակ Ազաւնի արմաթ Գաղաղեան, քեան հանգուցեալ Յակոբ վաչա Գաղաղեանի և Վսեմ. Նշան էֆ. Գաղաղ-եանի, որ անախիլա մահուամբ զբաւէր ի կեն-ցաղս ի 16ն Հոկտեմբերի անցելոյ, և յ18 ամսոյն մեծահանգէս չքալ և աշնարին բաղ-մութեամբ ողաւորաց և ի ցաւ գառնակիլիժ համօրէն սղգայնոց յուղարկուորէր յաւաղ եկեղեցւոյ Բերայի և թաղէր ի չիլիլան գեր-դատանիլ ի Շիլիլ: Ես ինքս եղէ հանգիստ-զիլ ծանրաթիլիլ արարողութեան, և ըստ սովորութեան եկեղեցւոյ՝ խօսեցայ զքարոյ մահուանն, կալեալ ինձ առաջնորդ զպատգամ խնամանոյն կիթէ «Կին իմաստուն և բարեպաշ-տոն օրհնեցի»:

Ծանօթ էին և են միշտ Ձերումը Սրբա-վաչ Վեհափառ արժանիք և արդիւնք, բա-րեալք ճիւղ և գործք միոյ միոյ յանդամոց Գաղաղեան Տանն ըստ իւրաքանչիւր կարգի, վաղամեթիլ Կարապետի և նախարարին Յա-կոբայ և ծերունադարդ Նեքաթիլիլաթ մօր, որք հեղհեղէ փոխեցան յատեալս, և որոց զհետ փութաց այժմ և արիլին Ազաւնի, թող-լով ի սուգ անհաթին զլիլիլան գերդատանիլ զսոհականն Նշան, վաղայեալ մանուսնոց վասն աշնարիլ, զի գտանի ինքն տկարացոյն գործ-քան գալսն, վիպ մահուան և կրող վաղաց բաժանման իւրաքանչիւրոցն: Դուք, Հայր Պատուական, ի ներկայութեան աստ Ձերում պատուելիք զտունն ատաքիլի, և զկնի մեկ-նելոյ ևս զայն պահելիք և վիպելիք նմին սէր և յարգանս, և մանուսնոց քաջ տեղեակ եղէք որպէս ատաքիլիլեան Ազաւնեայ, նոյնպէս արկածից նորա և փորձանաց, որոց և ևս տեղեակ ի մօտոյ՝ ոչ վարանեցայ համար-ճակարեան գովութեամբ ցուցանել ի նա զիլի-նըն իմաստուն և զկնին բարեպաշտոն:

Թերեւս ամանց, որք ի ծամածու գո-տաստան գտանեն զհաճութիւն, անկանէր ի միտս տեսանել յ'Ազաւնին Գաղաղեան զկնին այրաթող: Բաժանեալ յամուսնոյն, ի Կարա-

պեալ տեսմ Տէրունեան, ընդ որում ըստ ար-ճանադրութեանց Պատրիարքարանի նշանեալ էր պաշտօնապէս յամին 1886 յ'30 Օգոստոսի և պատկալ ի յաջորդ աւուր յ'31 ամսոյն: Այլ հարկ է ինձ յայնիլ միւնադամայն թէ ոչ որ ի ներկայից անդ ի յալիլիլաթն բաղմու-թենէ, և ոչ որ դարձեալ ի բացակայից կամ ի հեռուար աղգակեալս, որ ի մարտադարէս և ալլուր, ուղղեաց ինձ բանս կամ անհարկս գիտողութեան, և ոչ տարադարտ եղիս զխօ-սեցեալսն իննէն, զի ամենեքին առնաւարակ ոչ միայն բաժանեալ, այլ և իրաւամբ լուծ-եալ զիսէին գամուսնութիւնն զայն, որպէս և ես, և ճանաչէին պաշտօնապէս և զիսէին ստուգապէս յ'Ազաւնին ոչ այլ ևս զարիկին Տէրունեան, այլ պարզապէս զարիկին Գաղաղ-եան, որպէս ստորագրէր և որպէս կոչիւր նա յամենեւեց և յոր անուն յուղարկուորու-թեանն կատարեցան կարգ և հանգէսք: Այսմ համոզման և այսմ եղբակցութեան յայտա-բարք և ազապցութիւնք էին ամենայն պա-րագաք այսր տարաբաղ զամուսնութեան, ու-րոյ ծագումն ի խաթիլանոց ամուսնիլիլ, և որով հասարակ պաշտօնեալս գրասենիկի Սը-վաճեան Սարգսի, մանրմին Գաղաղեան Յա-կոբայ, անեալ զվերջինս զայս հասեալ յաւ-տիճան և ի պաշտօն նախարարութեան, եղ-եալ վարիչ անձնական գանձուց Օգոստոսիա Վալսի, և ստացեալ սղգեցութիւն մեծ ևս և կարգութիւն նշանաւոր ի պաշտօնանն, զիսէր միշտ ինքն յանկուցանելով զանիւրճն Ազաւնի, բանալ իւր ճանապարհ չարաչար չանոց ըստ ամենայն կերպարանաց: Եւ յի-րաւի, հակառակ ամենայն խորհրոց և հակա-ռակ իւր իսկ ներքին խորհրոց, յանձն առ-նոյր Ազաւնի գամուսնութիւնն ընդ Կարա-պետի Տէրունեան, ոչ ինքնաշարժ և ինքնա-յօժար ըզլիլիլ բերմամբ, այլ ընկճեալ ի ներ-քոյ բարոյական բնութեան և սղգանաց Կարապետի, զիւրովին գնալոյ ի չանուլիլ նո-րա յանձն կամ չարագոյն ինչ գործելոյ: Այս-պէս անգաթին ի սղգան գտանէր ամուսնու-թիւնն ոչ լուծեալ յօժարութեան և ըզլիլ, այլ արդիւնք խաթիլանոց և երկիւղի: Ամին յայնիլ էին և վաթիլար ընթացք Կարապետի զկնի ամուսնութեանն, որք վիպ են ի բաղ-մաց: Թողում ի բաց գանձամբոյր բարս, զա-նապէս գործս, զյայտնի նախատիլս, զանաթ-գակն բերմունս նորա ընդզէմ Ազաւնեայ, զընի և զտեսական պահանջս գումարաց զը-

րամոյ, զորս ի սէր եղբայրութեան ընդունէր Ազաւնին յ'եղբօրէն (և Կարապետ ծախսէր հա-մարձակ ի չապ և յանկուսան գործս), այլ և յայնիլ և անիլ յանկուսան յաչս կնոջն խաւ-նակէր նա ընդ օտար կանայս, և զպարտիս ամուսնութեան կատարէր ընդ այլոց: Այդ ա-մենայն, որք փութով եկեալ էին ի լոյս, և որք բուսական էին անգաթին ի սղգան խղել զտկար կապ բնադատ ամուսնութեան, ան-ւեցին զամս ինչ: Ազաւնի յանձն էստ տան-ջիլ և չարչարիլ, զի բարձր աստիճան և պաշ-տոն Եղբօրն պարտաւորէր գնալ չապ տեղի խօսից և մեղադրանոց, որք կարէին սկսեալ ի նմանէ կանկ և բարձրանալ մինչեւ ց'եղ-րայն: Այսպէս ճամարեալ և ստուգեալ էին կանխու պատճառք ամենայն, որոց վասն լուծանիլն ամուսնութիւնք հրամանաւ բարձ-րագոյն հոգեւորական իշխանութեանց:

Պատճառք որ զարտաքին լրումն գործոյն արդեւիլին ի սղգան, զարարեցան ի մահուան Յակոբ վաչայի Գաղաղեան յամին 1891 և սակաւուք զկնի անախիլա կորստեանն երբ Ազաւնին ընդ Կարապետի գանէին, ի հայրենի տան Գաղաղեանց, առ երես մօրն և եղբօրն Նշանայ, և Կարապետ ոչ խղճէր խաթարա-րական անխալի գործն յարատեւել, և զյարիլ ընտելութեան լքանել յաճախ, և զիտուղ-թիւնք իսկ Ազաւնեայ չ'լինէին օգտակար, հարկ լինէր ամին բաժանել խաթա, և մինչեւ իսկ այլևս ստորագրել և տալ զինքն կոչել արիլին Ազաւնի Գաղաղեան, որպէս օրէն է արիլին Ազաւնի Գաղաղեան, որպէս օրէն է ի կործան, որք և գտանին իսկ ի գրութիւնս բիլեալս ի Ս. Օծութենէ Վեհ. Հայրապետի, և յ'Ամենապատիւ Պատրիարքէն Սրբոյ Երու-սաղմի, որպէս և յամենայն պաշտօնական գրութիւնս Պատրիարքարանի մերոյ: Ի լրումն այդ ամենայնի և ի հանդարտութիւն խղճի բարեպաշտոն արիլիլան հաւուցանէիք և Դուք նմին զիւր միլիթարութեան, և ազատ կացուց-եալ գնալ յամենայն խղճէ և արձակելով յա-մենայն կապից և կապանոց, սայիլ գնալ վե-րըստին ի խորհուրդս Ս. Եկեղեցւոյ արքատա գրութեամբ, զոր ամենայն նախարար եր-կիւղածութեամբ պահէր նա առ ինքն և որոց անձն էր առնէր առաջի և զվիճակ անձինն ցուցանէր պարզեալ և կանխաւորեալ:

Եւ եթէ առաւել ինչ քան զայդ հարկ իցէ որոնել, ահա՛ կայ ի միջի հաստատեալ և վը-  
կայեալ և յամենեկունց ծանուցեալ խառնակ-  
եաց կեանք Կարապետի Տէրունեան ի Մայ-  
րաքաղաքիւ, թէ՛ յառաջին ամս անդ զկնի  
բաժանման, և թէ՛ ի վերջին ժամանակս աստ,  
զի յեօթն ամաց հետէ հեռացեալ յ'Եւրոպա,  
անցուցանէ զկեանս ի յայտնի ցովութեան և  
չնութեան, վարելով ընդ պոռնիկս և ընդ  
խառնակեաց կանաչս, և զայս վկայեն մեզ,  
որք միանգամ տեսեալ զնա և զգործս նորա,  
պատմեն զամենայն ի դամեալն անդրէն աս  
մեզ :

Չ'գոյր ուրեմն և ոչ մի կառաված երկու-  
անայ, թէ պարտ էր իրր օրինապէս լուծեալ  
համարել զպատկն Աղաւնեայ Գաղազեան ընդ  
Կարապետի Տէրունեան, թէ Աղաւնի չէր  
այլեւս Տիկին Տէրունեան, թէ իրաւամբ կո-  
չիւր նա Թիկին Գաղազեան, թէ չ'կայր ինչ  
ընդդէմ նորա արժանի մեղադրանայ, չէր նա  
անկեալ ընդ դատաստանու, թէ ընթացք նո-  
րա էին ուղիղ և օրինաւորութեամբ լրացեալ  
և թէ էր նա արդեամբ կին իմաստուն ընդ  
Աստուծոյ և ըստ աշխարհի իսկ, ի բայ տու-  
եալ թերեւս զտկարանալն երկուղիւ ատաջի  
բռնապատ սպառնալեաց Կարապետի, և մա-  
նաւանդ եղեալ էր նա կին բարեպաշտօն ըստ  
ամենայն ատմանց անուանն վարուք և բա-  
բուք և արդեամբք: Այսու համոզմամբ վա-  
րեցայ ես ի գործն և ի պարագայս յուղար-  
կաւորութեան, և մինչդեռ զկին մահուան  
Աղաւնեայ Կարապետ Տէրունեան ցուցանէր  
զինքն իրր օրինաւոր ամուսին նորին և խընդ-  
րէր բաժին ի ժառանգութենէն, նովին հա-  
մոզմամբ եւս յայտարարեցի եթէ չիք Աղաւն-  
եայ այլ ժառանգ, բայ յեզրօրմէն Նշանայ,  
մահուանդ զի Պատկառելի Կրօնական Ժողովն  
իսկ Կեդրոնական Վարչութեան Պատրիարքա-  
բանիս ի նմանօրինակ դիպուածի ատն մեղան-  
չողի ընդդէմ կնոջն և տարադէպ հեռացելոյ և  
ի պոռնիկան ծախելոյ զինչն, չ'գտանէր և  
չ'ճանոչէր յայրն անդ իրաւունս ի ժառան-  
գութեան՝ լքելոյ և բաժանելոյ և լուծելոյ կը-  
նոջն, և զայլ մերձաւորսն կոչէր ի ժառան-  
գութիւն կնոջն աշխարհուց:

Մեկին կամեցայ պարզարանել զամենայն  
պարագայս խնդրոյս, որպէս զի գիտութիւն  
լիցի բոտ աշխմ' Վեհ. Ս. Օծութեանդ և մի'  
տարապարտ գրույցք ինչ ի հակառակաց կող-  
մանէ կարասցին լինել պատճառ տարբեր ի-

մտադուլեթեան և զի ամենայն դորձք մեր և  
ընթացք ցուցցեն լեալ ըստ ամենայնի համա-  
ձայն օրինաց և կանոնաց և համաձայն սկիզբ-  
բանց մտաց և զգացմանց սրաի և թեկադրու-  
թեանց խզճի, ըստ սրոյ զիտէ դատել և զձեռք  
Վեհ. Տէրոյ և Հայրապետոյ մեր և Գերագան-  
կաթողիկոսոյ, զամենայն խնդիրս և կնճխոս և  
մանաւանդ զգլխաւորին գործուածս ամուսնա-  
կան խնդրոց և ամուսնական յաժմանց :

Այսպէս առաջի արարեալ զամենայն ,  
 Գնամ միշտ յարդանայս և սիրոյս հաւատաւօք  
 և Ս . Սջոյզ համբաւիւ Սրբախալ Վհնւ-  
 թեանց Խ . Որդի

ՄԱՂՍՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Դ. Կ. Դ.

1/14 *Землемер* 1903

★  
★ ★

Գ. — Խրեմեան Հայրեկի թիւ 631 և 1903 Մայիս 17 թուակիր հետեւեալ կոնգալը, ուղղուած Պատրիարք Թրմանեան Ս.ին՝ ի պատասխան վերոյիշեալ պրոթէան՝

« Ի թղթոյ Սիրելութեան Ձերոյ՝ ուղղելոյ յառաջնում աւուր ամիսանն Յունուարի տարւոյս ընդ համարեաւ 1558, հաւատարի եղաք զտարածում վախճանէ բարեպօչաւորնի արիկին Ազաւնոյ Գաղազեան՝ քեռ հանդուցեալ Յակոբ վաչալի Գաղազեան և Վսեմ. Նշան էֆէնտիլի, որ ծանօթ մեզ էր անդաւրն ի կոտորելութենէ հասակին իւրոյ տաքինի դործալք և համատու կենցաղաւարտութեամբ, որ սակաւն զմարդդ յամուսնական կիանա իւր եղև, իբրև կտմուսոր նախատակ հանդէպ անուղղայ վարուց և ցոխազննոց ընթացից եղեալ ասն իւրոյ Կարապետի Տէրունեան: Հաւատարի եղաք նոյնպէս եթէ ի յուշ ամեալ՝ զլճիս մեր վաղեմի, ի զամբանականի Ձերում ի պահ թաղման հանդուցելոյն՝ արիկին Ազաւնի Գաղազեան ամուսնեալ էք զհանդուցեալն, բայց ազգանուան եղեալ ասն Տէրունեան, և կարի յիբառունս. քանզի ի նկատ առեալ մեր ի ժամանակին զանջատ վիճակ երկոյցունց ամուսնոց՝ յառաջացելով ի բիրտ վարժանց Կարապետի Տէրունեան, յանուղղայ ընթացից նորին մեղանշելոյն ընդդէմ՝ ընտանեկան կեցութեան և ուխտի ամուսնական Սրբութեան, որ ընդ այլս խառնակէր ազատապար, նկատելով ազբիւր և եթ չահաւ զկինն տաքինի, մեք լուծեալ համարեալ էտք մագ ուրեմն ցգատնն Կա-

բազկախի Տէրութեան ընդ կնոջն իւրոյ Աղաւ-  
նոյ Գաղապեան, զարդիւ ի Տէր հանդուցելոյ,  
տալով իրաւունք երկուց կողմանցն եւս ա-  
ռանց խղճահարութեան մերձեանալ ի խորհուրդ  
Ս. Հաղորդութեան և այնու փակեալ էալ  
զմանդիր նոցա:

Ուստի և կոնգրակաւս այսու Հայրապետ-  
տականաւ յայտնելով և հաստատելով զնախ-  
կին լճիւն մեր՝ լերասիւն յուշ առնեմք, եթէ  
Կարապետն Տէրունեան ի ժամ մահուան հան-  
գուցեալ տիկին Սղաւնոյ Գաղազեան և այժմ  
խիղիղ կ'ընտանիքս և համարի յիբրաւանց  
անուանելոյ զինքն այր և ամուսին հանդու-  
ցելոյն և ի տիրապետութենէ յ'սուէ գոյից և  
ժառանգութեան հոսիսին կ'սոյ իւրոյ՝ ի բա-  
զում ամաց հետէ լուծելոյ Հայրապետական  
լճնով և հրամանաւ, զորմէ և հարկ համա-  
բեցաք յայտնել Ձեզ ի գիտութիւն և ի անօ-  
րիկնութիւն » :

✱  
✱ ✱

Այս բոլորն աչքի թռաջ ունենալով և  
հեկատեկով՝

Որ ամուսնալուծման վճիռը արդեն կան-  
խառ արուած է եղեր հոգեկոյս Խրիմեան Կա-  
թողիկոսի կողմէն,

631 Որ հոյնը կրկնապէս հաստատուած է թիւ  
կոնդակով ,

Ար Թրմանեան Ս.ի իրաւասութենէն վեր  
էր ամուսնալուծման խնդրին մէջ Կաթողիկոս  
ականքն մէկտը Գործադրելը, —

Յանձնաժողովն ամուսնալուծման խնդրին մեջ անսխալաբար կը հռչակէ ամբաստանեալն :

Եւ ասկայն միւս կողմէն նկատելով՝

Որ Օրմանեան Ս.ի թաղերէրն «Ճեմեկա-  
եհերքն սալուեալ» ելան օրսա իգամե-  
թիմեհէ պուլունմուտ » բառերով Կ. Տէրուն-  
եանը յաջ կառավարութեան կասկածելի կը  
հերկայացնէ , քանի որ ժընէվը ճանչցուած է  
իր բոյն յեղափոխականներու , որով Կ. Տէ-  
րունեան Կ. Պոլիս վերադառնալու և իւր գա-  
սկն անձամբ վարելու հարաւորութենէն կը  
զրկուէր :

Նկատելով որ հայն թագորթրն աշխարհի մէջ իր  
նկայի մեմալիքի նեհ պոլունու պ իմ պիւր  
նե իւրիւրի ինքիդալ իքմեհե պոլունան պի  
աւամա Ֆիւզիւի Օլարազ ազչե գազանսր  
մազ » բառերը Կարապետ Տէրունեանն բա  
ղայալստօրէն կասկածի տակ կը ձգեն ,

Նկատելով որ նոյն իմաստն ունի՝ նոյնպէս  
Կ. Տէրունեանը բաղըատութեան գնելը «Զա-  
թը շէկգէթսիմսիթը հագրէթը բատիշա՛իյէ վէ  
միււր ու տէօվլէթէ իֆաի հիւսնի խրամէթ  
իպրաղ՝ վէ մէհտէրը սատազաթ իթմիշ օլան  
միւթէվէֆա Յակոբ փաշա »լն հետ ,

Նկատելով որ ազգի մը Պատրիարքին կողմէ՝ ազգայինի մը վերաբերմամբ, պաշտօնագրերէրու մէջ, այգօրինակ բառերու գործածութիւնը բնաւ չի կրնար ներկի ըլլալ, քանի որ սոյն թագրերի խնդրին մէջ ո՛չ Համկտեան բռնակալութեան և ո՛չ ալ պետական ո եւ է պաշտօնէութեան կողմանէ բռնադատութիւն մը ստութիւն հառէր և չէր կրնար ունենալ:

Ահա այս բոլոր նկատումներու հիման վրայ Յանձնաժողովս յիշեալ թագրերին՝ այն ժամանակուայ հասկացողութեամբ քաղաքականապէս անուանարկիչ հանդամանք ունեցող վերոնշանակեալ արտայայտութիւնները դասապարտելի կը գտնէ:

ՔՆՆԻԶ ՅԱՆԶՆ՝ԺՈՂՈՎԷ

## Նախապահ

ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿ. ՏԷՐՈՒՆԵԱՆ

| Ասեմադպիր        | Ասեմապետ             |
|------------------|----------------------|
| ՀՄԱՅԵԱԿ ԱՐԱՄԵԱՆՅ | ՎՌԱՄԵԱՊՈՒՀ ՄԱՆՈՒԿԵԱՆ |

Ս. ԷՍՍԷՐԵԱՆ ԳՆԷԼ Ծ. ՎՐԴ. ԳՍԼԷՄՔԵԱՐԵԱՆ  
ՎԱՀԱՆ ՔՍԶ. ԽՈՑԵԱՆ

Օրմանեան Սրբազանը՝ թէեւ ինչ ինչ տեսակէաներով մեղադրելի, սակայն իր ժամանակի քաղաքական հանդամանքները նկատողութեան առնելով՝ ոչ—դատաւարտելի կը գտնեմ:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԱՀ. ՀԻՍԱՐԼԵԱՆ

1. — Յանձնաժողովին համակարծրք եմ  
Լահէյի հեռագրի խնդրոյն մէջ գիտաւած յան-  
ջանքի մասին, իսկ ներերկու կամ հերերկու  
սրբազան Ազգ. Ժողովոյ գնահատման թող-  
լու կարծիքէն եմ:

2. — Գարակեօղանի խնդրոյն մէջ համոզուած չեմ թէ Զպաղեանի և պարագայից խնդրանքը օրուան Պատրիարքը կտ կեցաւ նոյն պործը հետապնդելի :

3. — Կարգ մը խնդիրներ որ համարա-  
տուութեան կը վերաբերին ըսելով՝ Յանձնա-  
ժողովը իր վրայէն նետած է, կրնային քըն-  
նուիլ և նոյն խնդիրները առկա չձգել, որով  
Օրմանեան Սրբազանը երկար առէն խնդրոյ  
ներքեւ կը մնայ դարձեալ, մինչ արդէն շատ  
երկարեցաւ իր առկա վիճակը:

ՄԱՐԿՈՍ ՆՍՔԱՆԵԱՆ

Քննիչ Յանձնախմբին կողմանէ պատ-  
րաստուած տեղեկագրին մէջ քննուած ամ-  
բաստանութեանց ամէն խնդրոց մէջ համաձայն  
եմ, նմանապէս Լահէի Դեպքանախորհրդոյ  
քաշուած հեռագրի մասին տրուած որոշումը՝  
յանցանքին սկզբունքը ընդունած եմ. սակայն  
երբէք համաձայն չեմ որոշել յանցանքին նե-

րելի կամ դատաւարելի ըլլալու հանդաման-  
քը, այլ կը թողու՞մ այդ վճիռը արձակել  
Ազգ. Պատկ. Երեսի. Ժողովոյ:

ՏԱՃԱՏ ՔԱՆ. ՓԱՇԱԵԱՆ

Հիմնուելով այն պատճառարանութեանց  
վրայ զորս զրաւորապէս ներկայացուցած եմ  
Յանձնաժողովին և զոր կողէի նաեւ Ազգ.  
Ժողովոյ ալ ներկայացուած տեւնել, եւ Լա-  
հէի հեռագիրը ամենեւին յանցանք չեմ հա-  
մարիր Օրմանեան Սրբազանի, ըլլայ դատա-  
պարտելի, ըլլայ ոչ դատապարտելի: Միւս  
խնդրոց մէջ համաձայն եմ Յանձնաժողովոյ  
մեծամասնութեան:

ՆՏԱՆ ՃԻՎԱՆԵԱՆ



34640

